

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ



Իրավական փաստաթղթեր

CM/Rec(2014)6 Հանձնարարական և  
բացատրական հուշագիր

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

**Նախարարների կոմիտեի՝ իր անդամ  
պետություններին ուղղված թիվ CM/Rec(2014)6  
հանձնարարականը Մարդու իրավունքների  
ուղեցույց Համացանցի օգտատերերի համար**

*(Նախարարների կոմիտեի կողմից ընդունվել է ապրիլի  
16-ին 2014 թ. Նախարարների պատվիրակների  
1197րդ նիստում )*

This unofficial translation of Recommendation CM/Rec(2014)6 was performed pro bono by the Safer Internet Armenia. The Council of Europe encourages the translation and distribution of its legal instruments by interested parties, but does not assume responsibility for the accuracy of the new language version of the text. The English and French versions of this Recommendation as adopted by the Committee of Ministers are the only authentic texts and should be consulted in case of doubt.

CM/Rec(2014)6 հանձնարարականի ոչ պաշտոնական այս թարգմանությունը կատարվել է հասարակական հիմունքներով պրո բոնո, Ապահով Համացանց Հայաստան ծրագրի կողմից: Եվրոպայի խորհուրդը խրախուսում է իր իրավական փաստաթղթերի թարգմանությունը և տարածումը շահագրգիռ կողմերի կողմից, սակայն պատասխանատվություն չի կրում նոր լեզվական տարբերակի ճշգրտության համար: Նախարարների կոմիտեի կողմից ընդունված այս հանձնարարականի անգլերեն և ֆրանսերեն տարբերակները միակ վավերական տեքստերն են, որոնց հետ պետք է համեմատություն կատարվի կասկածի դեպքում:



# Համացանցի օգտատերերի իրավունքները

*Կառավարությունները, մասնավոր ընկերությունները և այլ դերակատարները պարտավոր են հարգել մարդու իրավունքները Համացանցից դուրս և Համացանցում: Մենք կաշխատենք նրանց հետ, որպեսզի նրանք կիրառեն Ուղեցույցը և ապահովեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ Համացանցի օգտատերերի համար, այն բոլոր դեպքերում, երբ նրանց կարծիքով նրանց իրավունքները սահմանափակվել կամ խախտվել են:*

*Ողջույնի խոսք Ուղեցույցի ընդունման կապակցությամբ, Գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդ*

## Մարդու իրավունքների ուղեցույց Համացանցի օգտատերերի համար

**Եվրոպայի խորհուրդը հրապարակել է Մարդու իրավունքների սույն Ուղեցույցը Համացանցի օգտատերերի համար՝ որպես գործիք անհատների համար՝ վկայակոչելու այն բոլոր դեպքերում, երբ նրանք հանդիպում են դժվարությունների իրենց իրավունքների իրականացման հարցում, օգնելու կառավարություններին և պետական մարմիններին կատարելու մարդու իրավունքները պաշտպանելու, հարգելու և վերականգնելու՝ իրենց պարտավորությունները, խթանելու ներպետական քննարկումներ Համացանցի օգտատերերի իրավունքների պաշտպանության ու տարածման և նրանց՝ համացանցային միջավայրում իրավունքներով զինելու վերաբերյալ, խթանելու կոլեկտիվ սոցիալական պատասխանատվությունը՝ խրախուսելով մասնավոր հատվածին գործելու պատասխանատու կերպով և հարգելով այն անձանց իրավունքները, որոնց հետ պայմանագրեր են կնքում:**

Համացանցի օգտատերերի համար նախատեսված Մարդու իրավունքների ուղեցույցը հիմնված է արդեն իսկ գոյություն ունեցող իրավունքների վրա՝ ամրագրված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում և Եվրոպայի խորհրդի այլ կոնվենցիաներում և իրավական փաստաթղթերում, ինչպես նաև Մարդու

իրավունքների եվրոպական դատարանի կողմից այդ իրավունքներին տրված մեկնաբանություններում:

Համացանցի օգտատերերի համար նախատեսված Մարդու իրավունքների ուղեցույցը մշակված է բազմակողմ քննարկումների արդյունքում կառավարությունների, հեռահաղորդակցությունների և առցանց ծառայություններ տրամադրող մասնավոր ընկերությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և տեխնոլոգիական ու գիտական համայնքների ներկայացուցիչների հետ:

### **Ամփոփելով՝**

Համացանցի օգտատերերի համար նախատեսված Մարդու իրավունքների ուղեցույցը նախատեսված է որպես գործիք՝ օգնելու օգտատերերին հասկանալ իրենց առցանց իրավունքները և թե ինչ կարող են նրանք անել, երբ դրանք ոտնահարվում են: Այն չի ստեղծում նոր իրավունքներ: Ուղեցույցը հանրամատչելի լեզվով և ձևաչափով բացատրում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները և դրանց կիրառումը Համացանցում:

## **Մարդու իրավունքներ Համացանցի օգտատերերի համար**

### **Նախաբան**

Սույն Ուղեցույցը գործիք է, որի միջոցով դուք՝ Համացանցի օգտատերեր, կարող եք տեղեկանալ Ձեր առցանց իրավունքների, դրանց սահմանափակումների և այդ սահմանափակումների դեմ առկա իրավական պաշտպանության միջոցների մասին: Մարդու իրավունքներն ու հիմարար իրավունքները գործում են հավասարապես Համացանցից դուրս և Համացանցում: Այս սկզբունքը ենթադրում է հարգանք Համացանցի այլ օգտատերերի իրավունքների և ազատությունների նկատմամբ: Ուղեցույցը Ձեզ տեղեկություններ կհաղորդի այն մասին, թե իրականում ինչ նշանակություն ունեն մարդու իրավունքներն ու ազատություններն Համացանցի ենթատեքստում, ինչպես կարելի է ապավինել դրանց և օգտվել դրանցից, ինչպես նաև իրավական պաշտպանության միջոցներից: Այն կենդանի փաստաթուղթ է և ենթակա է պարբերական կատարելագործման:

### **Ամփոփելով՝**

Սույն ուղեցույցը մաս է կազմում Նախարարների կոմիտեի՝ Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետություններին ուղղված Հանձնարարականի: Ուղեցույցը բացատրող

առավել հանգամանալից տեղեկություններ կարելի է գտնել [Հանձնարարականի Բացատրական հուշագրում](#):

- [մատչելիություն և խտրականության արգելք](#)
- [արտահայտվելու և տեղեկատվության ազատություն](#)
- [հավաքների, միավորվելու և մասնակցելու ազատություն](#)
- [անձնական կյանքի գաղտնիություն և տվյալների պաշտպանություն](#)
- [կրթություն և գրագիտություն](#)
- [երեխաների և երիտասարդների պաշտպանություն](#)
- [մարդու իրավունքների խախտումների պարագայում արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի իրավունք](#)

Սույն Ուղեցույցը հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Եվրոպայի խորհրդի այլ կոնվենցիաների և փաստաթղթերի վրա, որոնք անդրադառնում են մարդու իրավունքների պաշտպանության տարբեր ասպեկտներին: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները պարտավոր են հարգել, պաշտպանել և ապահովել իրենց կողմից վավերացված փաստաթղթերում ամրագրված իրավունքներն ու ազատությունները: Ուղեցույցը նաև օգտվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից այդ իրավունքներին և ազատություններին տրված մեկնաբանություններից, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի այլ վերաբերելի իրավական փաստաթղթերից:

Ուղեցույցը չի սահմանում նոր մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ: Այն հիմնվում է մարդու իրավունքների գործող չափորոշիչների և դրանց ապահովման մեխանիզմների վրա:

Տես [Հանձնարարականի](#) և [Բացատրական հուշագրի](#) ամբողջական տեքստն այստեղ:

## Մատչելիություն և խտրականության արգելք

Համացանցի մատչելիությունը կարևոր եղանակ է, որի միջոցով կարող եք իրականացնել Ձեր իրավունքներն ու ազատությունները և մասնակցություն ունենալ ժողովրդավարական հասարակությունում: Այդ պատճառով Ձեզ չպետք է Ձեր կամքին հակառակ անջատեն Համացանցից, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպես է որոշում դատարանը: Որոշ դեպքերում պայմանագրային դրույթները ևս կարող են հանգեցնել նրան, որ ծառայությունը դադարեցվի, սակայն սա պետք է մնա որպես ծայրահեղ միջոց:

Համացանցը պետք է նաև մատչելի լինի ֆինանսական տեսանկյունից և չլինի խտրական: Ձեզ համար պետք է առավելագույնս մատչելի լինեն Համացանցի բովանդակությունը, կիրառական ծրագրերը, հավելվածները և ծառայությունները Ձեր իսկ ընտրած սարքերի միջոցով:

Ձեզ համար պետք է ակնկալելի լինի, որ պետական մարմինները ողջամիտ ջանքեր են գործադրում և հատուկ միջոցներ ձեռնարկում՝ ապահովելու Համացանցի մատչելիությունը Ձեզ համար, եթե ապրում եք գյուղական և աշխարհագրորեն հեռու գտնվող վայրերում կամ Ձեր եկամուտը ցածր է և/կամ ունեք հատուկ կարիքներ կամ հաշմանդամություն:

Պետական մարմինների, համացանցային ծառայություններ մատուցողների և առցանց նյութեր և ծառայություններ տրամադրող ընկերությունների, կամ օգտատերերի կամ օգտատերերի խմբերի հետ փոխհարաբերություններում Դուք չպետք է խտրականության ենթարկվեք որևէ հիմքով, ինչպիսիք են սեռը, ռասան, գույնը, լեզուն, կրոն կամ հավատը, քաղաքական կամ այլ տեսակետները, ազգային կամ սոցիալական ծագումը, կապն ազգային փոքրամասնության հետ, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը, այդ թվում՝ էթնիկ պատկանելությունը, տարիքը կամ սեռական կողմնորոշումը:

#### Ամփոփելով՝

Մատչելիությունը հնարավորություն է ընձեռում իրականացնելու մարդու իրավունքները: Որպես ընդհանուր կանոն՝ օգտատերերին չպետք է իրենց կամքին հակառակ անջատել Համացանցից, բացառությամբ, եթե այդպես չի որոշել դատարանը:

## Մատչելիություն և խտրականության արգելք

### Բացատրական հուշագիր

1. Ուղեցույցն ընդգծում է այնպիսի սկզբունքներ և նկատառումներ, որոնք անխզելիորեն կապված են և վերաբերում դրանում ներառված բոլոր իրավունքներին և հիմնարար ազատություններին, այդ թվում՝ Համացանցի մատչելիության և խտրականության արգելքի սկզբունքը:

2. Չնայած Համացանցի մատչելիությունը [դեռևս պաշտոնապես ճանաչված չէ որպես մարդու իրավունք](#) (հաշվի առնելով ազգային համատեքստերի, այդ թվում՝ իրավունքի և քաղաքականության, տարբերությունները), այն համարվում է

նախապայման, ինչպես նաև արտահայտվելու ազատության և այլ իրավունքների իրականացման անհրաժեշտ բաղադրիչ: Հետևաբար, Համացանցի օգտատիրոջը Համացանցից անջատելը կարող է բացասաբար անդրադառնալ նրա իրավունքների և ազատությունների իրականացման վրա և անգամ համարվել արտահայտվելու ազատության, այդ թվում՝ տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքի սահմանափակում: Դատարանն ընդգծել է, որ Համացանցն այսօր դարձել է անձանց կողմից արտահայտվելու և տեղեկատվության իրավունքի իրականացման հիմնական միջոցը: Արտահայտվելու ազատությունը վերաբերում է ոչ միայն տեղեկատվության բովանդակությանը, այլև դրա տարածման միջոցներին, քանի որ այդ իրավունքի որևէ սահմանափակում անխուսափելիորեն միջամտություն է տեղեկատվություն ստանալու և տարածելու իրավունքին: Այդ միջամտություններն ընդունելի են միայն եթե դրանք բավարարում են ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով նախատեսված պայմանները՝ համաձայն [Դատարանի](#) մեկնաբանությունների: Որևէ միջոցառում, որը որևէ կերպ ազդում է անձի համար Համացանցի մատչելիության վրա, հանգեցնում է պետության՝ 10-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությանը:

3. Այս համատեքստում Ուղեցույցը սահմանում է, որչի կարելի Համացանցի օգտատերերին անջատել Համացանցից նրանց կամքին հակառակ, եթե դա նախատեսված չէ դատարանի որոշմամբ: Այդուհանդերձ, սա չպետք է դիտարկել որպես դրույթ, որն արգելում է օրինական անջատումները, որոնք կապված են պայմանագրային պարտավորությունների չկատարման հետ: Համացանցային ծառայությունները կարող են դադարեցվել այն սպառողների դեպքում, ովքեր չեն վճարում իրենց ծառայությունների դիմաց: Սակայն դա պետք է լինի ծայրահեղ միջոց: Ավելին, թույլատրվում է ծնողական հսկողության շրջանակներում ընդհատել Համացանցի մատչելիությունը երեխաների համար՝ կախված երեխայի տարիքից և հասունությունից:

4. Համացանցի օգտատերերի համար պետք է հասու լինեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ Համացանցի անջատումների պարագայում, եթե դա տեղի չի ունեցել դատարանի որոշմամբ: Սա ներառում է այն, որ Համացանցային ծառայություններ տրամադրողները պետք է տեղեկացնեն Համացանցի օգտատերերին անջատման պատճառների և իրավական հիմքերի, ինչպես նաև առարկություններ ներկայացնելու և ծառայությունները լիարժեքորեն վերականգնելու պահանջ ներկայացնելու ընթացակարգերի մասին: Այդպիսի պահանջները պետք է քննության առնվեն ողջամիտ ժամկետներում: Ավելին՝ Համացանցի յուրաքանչյուր օգտատեր արդար դատաքննության իր իրավունքն իրականացնելիս պետք է կարողանա հայցել ծառայության դադարեցման

վերանայում իրավասու վարչական մարմնի և/կամ դատարանի առջև: Պատշաճ ընթացակարգերի մասին այս հարցերն ամփոփված են Ուղեցույցի վերջին բաժնում, որի վերնագիրն է «Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ»:

5. Համացանցի մատչելիության հարցի մեկ այլ ասպեկտ են այն դրական գործողությունները կամ միջոցառումները, որոնք պետական մարմինները ձեռնարկում են՝ ապահովելու, որպեսզի յուրաքանչյուր ոք կարողանա միանալ Համացանցին: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն առաջարկել է իր անդամ պետություններին խթանել [Համացանցի հանրային ծառայության արժեքը](#): Սա ընկալվում է հետևյալ կերպ. «մարդիկ խորապես ապավինում են Համացանցին՝ որպես իրենց ամենօրյա գործունեության կարևոր գործիքի (հաղորդակցություն, տեղեկատվություն, գիտելիք, առևտրային գործարքներ) և ունեն միանգամայն օրինական ակնկալիք, որ համացանցային ծառայությունները պետք է լինեն մատչելի, ողջամիտ գնային առումով, անվտանգ, հուսալի և շարունակական»: Այս բաժինը տեղեկացնում է օգտատերերին, որ նրանց համար Համացանցը պետք է լինի մատչելի, գնային առումով ողջամիտ և ոչ խտրական:

6. Համացանցի բովանդակության մատչելիության իրավունքը ևս կապված է Համացանցով տեղեկություններ ստանալու և տարածելու հետ, ինչպես նախատեսում է ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածը: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն վերահաստատել է, որ Համացանցի պարունակությունը, կիրառական ծրագրերը, ծառայությունները ևս պետք է առավելագույնս մատչելի լինեն յուրաքանչյուր օգտատիրոջ համար՝ անկախ այն բանից, թե դրանք վճարովի են, թե՛ ոչ, իրեն հասու համապատասխան սարքերի միջոցով: Սա ընդհանուր սկզբունք է, որ հայտնի է նաև որպես [ցանցային չեզոքություն](#), որը գործում է անկախ այն բանից, թե ինչ ենթակառուցվածք կամ ցանց է օգտագործվում միացման նպատակով:

7. Պետական մարմինները պետք է ողջամիտ ջանքեր գործադրեն ապահովելու Համացանցի մատչելիությունն անձանց հատուկ դասերի համար, ինչպիսիք են հեռավոր վայրերում ապրող և հաշմանդամություն ունեցող անձինք: Սրա հիմքում ընկած է համընդհանուր համայնքային ծառայությունը, որն ամրագրված է [Նախարարների կոմիտեի թիվ No.R\(99\)14 հանձնարարականում հաղորդակցության և տեղեկատվության նոր ծառայությունների վերաբերյալ](#): Այն ընդգծում է, որ գյուղական կամ հեռավոր վայրերում ապրող, ցածր եկամուտ ունեցող կամ հատուկ կարիքներ կամ հաշմանդամություն ունեցող անձինք կարող են պետական մարմիններից ակնկալել հատուկ միջոցառումներ Համացանցի մատչելիության ապահովման նպատակով:

8. Հաշմանդամություն ունեցող անձանց ակնկալիքներն այն առումով, որ նրանց համար ևս Համացանցը պետք է լինի մատչելի հավասարապես և անխտիր, բխում է **Եվրոպայի խորհրդի փաստաթղթերից**, որոնք անդամ պետություններին առաջարկում են միջոցներ ձեռնարկել ունենալու համապատասխան հարմարություններ հաշմանդամություն ունեցող օգտատերերի համար Համացանցի և ՏՀՏ-ների մատչելիությունն ապահովելու նպատակով: Անդամ պետությունները պետք է խրախուսեն ֆինանսապես մատչելի ծառայություններ՝ հաշվի առնելով նախագծման, ինչպես նաև այդ անձանց և խմբերի շրջանում իրազեկության բարձրացման կարևորությունը, Համացանցի մատչելիության և ծառայությունների պատշաճությունը և գրավչությունը, ինչպես նաև դրանց համապատասխանեցման ունակությունը:

9. Խտրականության արգելման սկզբունքը պետք է վերաբերի պետական մարմինների, Համացանցային ծառայությունների մատուցողների, Համացանցի բովանդակության և այլ ծառայություններ տրամադրող ընկերությունների, օգտատերերի և այլ խմբերի հետ օգտատերերի փոխազդեցություններին: Չորրորդ պարբերությունն, ըստ էության, ՄԻԵԿ-ի 14-րդ հոդվածի և 12-րդ արձանագրության 1-ին հոդվածի վերաձևակերպումն է, որոնք երկուսն էլ վերաբերում են խտրականության արգելքին:

Տես **Բացատրական հուշագրի ամբողջական տեքստը**:

## Արտահայտվելու և տեղեկատվության ազատություն

**Դու ունեք տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունք՝ առանց որևէ միջամտության և անկախ սահմաններից:**

Սա նշանակում է, որ.

**Դուք ազատորեն կարող եք արտահայտվել Համացանցում և ծանոթանալ այլոց կողմից տարածվող տեղեկություններին, կարծիքներին և արտահայտություններին:** Սա ներառում է քաղաքական խոսքը, կրոնական տեսակետները, այն կարծիքները և արտահայտությունները, որոնց վրդովեցուցիչ չեն, սակայն նաև այնպիսիք, որոնք վրդովեցուցիչ են, ցնցող և անհանգստացնող: Պետք է պատշաճորեն հաշվի առնել այլ անձանց հեղինակությունը, այդ թվում՝ նրանց մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը:

**Սահմանափակումները կարող են վերաբերել այնպիսի արտահայտությունների, որոնք հրահրում են խտրականություն, ատելության խոսք կամ բռնություն:** Այս

սահմանափակումները պետք է լինեն իրավաչափ, խիստ նեղ և կիրառվեն դատական վերահսկողությամբ:

**Դուք ազատ եք ստեղծելու, վերստին օգտագործելու և տարածելու նյութեր՝** հարգելով մտավոր սեփականության, այդ թվում՝ հեղինակային իրավունքների պաշտպանության իրավունքը:

**Պետական մարմինները պարտավոր են հարգել և պաշտպանել Ձեր արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքները:** Այս իրավունքի սահմանափակումները չպետք է լինեն կամայական, պետք է հետապնդեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվեցիայով նախատեսված իրավաչափ նպատակներից մեկը, ինչպիսիք են ազգային անվտանգության կամ հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության պաշտպանությունը և պետք է համապատասխանեն մարդու իրավունքների իրավունքին: Ավելին՝ Դուք պետք է տեղեկացված լինեք դրանց և տիրապետեք խորհրդատվություն և հատուցում հայցելու ուղիներին: Այդ սահմանափակումները չպետք է լինեն ավելի լայն կամ պահպանվեն ավելի երկար ժամանակ, քան խստիվ անհրաժեշտ է իրավաչափ նպատակին հասնելու համար:

**Ձեր համացանցային ծառայություն տրամադրող և բովանդակության և ծառայություններ տրամադրող կազմակերպությունները կորպորատիվ պատասխանատվություն են կրում ձեր իրավունքները հարգելու տեսակետից և պետք է մեխանիզմներ նախատեսեն ձեր պահանջներին արձագանքելու համար:** Այդուհանդերձ, դուք պետք է տեղյակ լինեք, որ առցանց ծառայություններ տրամադրողները, օրինակ՝ սոցիալական ցանցերի, կարող են սահմանափակել որոշակի բովանդակություն կամ վարքագիծ՝ իրենց քաղաքականություններին համապատասխան: Դուք պետք է տեղյակ լինեք հնարավոր սահմանափակումներին, որպեսզի կարողանաք իրազեկ որոշում կայացնել՝ արդյոք օգտվել, թե չօգտվել տվյալ ծառայությունից: Սա ներառում է կոնկրետ տեղեկություններ այն մասին, թե համացանցային ծառայություններ տրամադրողն ինչն է համարում ապօրինի կամ ոչ պատշաճ բովանդակություն կամ վարքագիծ ծառայություններից օգտվելիս և ինչ կերպ է արձագանքում դրան:

**Կարող եք առցանց չբացահայտել Ձեր ինքնությունը,** օրինակ՝ կեղծանունով հանդես գալու միջոցով: Այդուհանդերձ, պետք է տեղյակ լինեք, որպետական մարմինները կարող են միջոցներ ձեռնարկել, որոնք կարող են հանգեցնել Ձեր ինքնության բացահայտմանը:

## Ամփոփելով՝

Համացանցում օգտատերերը կարող են ազատորեն արտահայտվել և ծանոթանալ այլոց կողմից տարածվող տեղեկություններին և կարծիքներին, այդ թվում՝ այնպիսիների, որոնք կարող են լինել վրդովեցուցիչ, ցնցող և անհանգստացնող՝ հարգելով այլոց հեղինակությունը և մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը: Պետական մարմինները պարտավոր են հարգել և պաշտպանել այս իրավունքը: Այս իրավունքի որևէ սահմանափակում պետք է հետապնդի իրավաչափ նպատակ և լինի անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաձայն:

## Արտահայտվելու և տեղեկատվության ազատությունը

### Բացատրական հուշագիր

1. Այս բաժինը վերաբերում է արտահայտվելու ազատությանը այնպես, ինչպես այս իրավունքը երաշխավորված է **ՄԻԵԿ-ում**: Դատարանի **դատական պրակտիկայով** հաստատվել է, որ 10-րդ հոդվածը լիովին կիրառելի է Համացանցի նկատմամբ: Արտահայտվելու ազատության իրավունքը ենթադրում է կարծիքների, տեսակետների, գաղափարների ազատ արտահայտում և տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունք՝ անկախ սահմաններից: Համացանցի օգտատերերը պետք է ազատ լինեն իրենց քաղաքական, ինչպես նաև կրոնական և ոչ կրոնական համոզմունքներն արտահայտելու հարցում: Վերջինը վերաբերում է մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի իրականացմանը՝ ամրագրված ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածում: Արտահայտվելու ազատությունը վերաբերում է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների», որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են ընկալվում կամ չեն համարվում վրդովեցուցիչ, այլև այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ են, ցնցող կամ անհանգստացնող:

2. Համացանցի օգտատերերի կողմից արտահայտվելու ազատության իրականացումը պետք է հավասարակշռվի հեղինակության պաշտպանության իրավունքի հետ: Մի շարք դեպքերում Դատարանը սահմանել է, որ վերջին իրավունքը պաշտպանված է ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով: Դատարանը գտել է, որ սկզբունքորեն 8-րդ և 10-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները պետք է հարգվեն հավասարապես: Դատարանը համարում է, որ երբ արտահայտվելու ազատության իրավունքը հավասարակշռվում է անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի հետ, այդ գործընթացում վերաբերելի չափանիշները ներառում են հետևյալ տարրերը՝

նպաստը հանրային շահին վերաբերող քննարկմանը, որքանով է տվյալ անձը հայտնի, նյութի առարկան, տվյալ անձի վարքագիծը նախկինում, տեղեկությունների ստացման եղանակը և ճշգրտությունը, հրապարակման բովանդակությունը, ձևը և հետևանքները, պատասխանատվության միջոցի խստությունը: Հետևաբար, Ուղեցույցը հստակեցնում է, որ Համացանցի օգտատերը պետք է պատշաճ ուշադրություն դարձնի այլոց հեղինակության, այդ թվում՝ նրանց անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին:

3. Կան արտահայտություններ, որոնք չեն պաշտպանվում [ՄԻԵԿ-ի](#) 10-րդ հոդվածով, օրինակ՝ ատելության խոսքը: Դատարանը գտել է, որ արտահայտության որոշ ձևեր, որոնք ատելության խոսք են պարունակում կամ որոնք ժխտում են ՄԻԵԿ-ի հիմնարար արժեքները, չեն օգտվում ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի պաշտպանության միջոցներից: Այս կապակցությամբ Դատարանը կիրառել է ՄԻԵԿ-ի 17-րդ հոդվածը: Չնայած չկա ատելության խոսքի՝ համընդհանրորեն ընդունված սահմանում, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն սահմանել է, որ [ատելության խոսքը](#) պետք է ներառի արտահայտության բոլոր այն ձևերը, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ռասայական խտրականությունը, մարդատյացությունը, հակասեմիտիզմը կամ անհանդուրժողականության վրա հիմնված ատելության այլ ձևերը, այդ թվում՝ ագրեսիվ ազգայնականությունը և էթնոցենտրիզմը, խտրականությունը և թշնամանքը փոքրամասնությունների, միգրանտների և միգրանտ ծագում ունեցողների նկատմամբ: Արտահայտվելու ազատությանը վերաբերող բաժնի երկրորդ պարբերությունը հանրամատչելի լեզվով ներկայացնում է հակիրճ տեղեկություններ այն մասին, որ ատելության խոսքի վրա չի տարածվում 10-րդ հոդվածը: Այս պարբերությունը նպատակ չունի իրավական եզրերով բացատրելու, թե ինչ տարբեր եղանակներով են 10-րդ և 17-րդ հոդվածները կիրառելի ատելության խոսքի նկատմամբ: Հաշվի առնելով այս սահմանման իրավական բնույթը՝ համարվում է, որ այս հարցն առավել ճիշտ կներկայացնի Բացատրական հուշագիրը:

4. Օգտատերերն իրավունք ունեն ստանալու և տարածելու տեղեկություններ Համացանցով, մասնավորապես՝ ստեղծելու, վերստին օգտագործելու և տարածելու տեղեկություններ Համացանցի միջոցով: Դատարանը քննության է առել մտավոր սեփականության պաշտպանության և արտահայտվելու ազատության հետ կապված իրավահարաբերությունները հեղինակային իրավունքի խախտումների հետևանքով անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու գործերով: Դատարանը համարել է, որ քրեական պատասխանատվության նման միջոցները միջամտություն են արտահայտվելու ազատության իրավունքին, որը արդարացված լինելու համար

պետք է նախատեսված լինի օրենքով, հետապնդի այլոց իրավունքների պաշտպանության իրավաչափ նպատակ և լինի անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում: Համացանցում ֆայլել տարածելը կամ թույլ տալը, որ այլոք տարածեն (խոսքը վերաբերում է նաև հեղինակային իրավունքով պաշտպանված և շահույթ ստանալու նպատակով տարածվող նյութերին) պաշտպանվում է ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով: Սա իրավունք է, որը բացարձակ չէ, և անհրաժեշտ է հավասարակշռել մի կողմից այլոց հետ տեղեկություններ փոխանակելու շահը հեղինային իրավունքով օժտված անձանց իրավունքների պաշտպանության շահի հետ: Դատարանն ընդգծել է, որ մտավոր սեփականության վրա տարածվում է ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը: Այսպիսով՝ խնդիրը ՄԻԵԿ-ով պաշտպանված երկու մրցակցող շահերի պաշտպանությունն է:

5. Նախարարների կոմիտեն առաջարկել է իր անդամ պետություններին խթանել **Համացանցի հանրային ծառայության արժեքը**, ինչը ներառում է հատուկ խորհրդատվություն Համացանցում հաղորդակցության և ստեղծագործելու ազատությանը վերաբերող միջոցառումների և ռազմավարությունների հարցում՝ անկախ սահմաններից: Մասնավորապես՝ պետք է միջոցներ ձեռնարկել ապահովելու, հնարավորության, սահմաններում Համացանցի բովանդակության «վերստին օգտագործումը», այն է՝ արդեն իսկ առկա թվային բովանդակության օգտագործումը ապագա բովանդակություն ստեղծելու նպատակով այնպես, որ դա լինի համատեղելի մտավոր սեփականության իրավունքների նկատմամբ հարգանքի հետ:

6. 4-րդ պարբերությունն ընդհանուր գծերով անդրադառնում է այն պահանջներին, որոնց պետք է բավարարեն արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումները: Անդամ պետություններն առաջնահերթ կարգով պարտավոր են ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի ներքո չմիջամտել անձանց միջև տեղեկատվության փոխանակմանը՝ անկախ այն բանից, դրանք իրավաբանական, թե ֆիզիկական անձինք են: Դատարանը հաստատել է, որ արտահայտվելու ազատության արդյունավետ իրականացումը կարող է նաև ենթադրել պաշտպանության պոզիտիվ գործողություններ անգամ անձանց միջև փոխհարաբերություններում՝ ի տարբերություն պետություն-մասնավոր անձ փոխհարաբերությունների: Պետության պատասխանատվություն կարող է ծագել այն դեպքում, երբ պետությունը չի ընդունում համապատասխան ներպետական օրենսդրություն: ՄԻԵԿ-ի խախտում կարող է ճանաչվել նաև այն դեպքում, երբ ներպետական դատարանը իրավական ակտը, այդ թվում՝ մասնավոր պայմանագիրը, պետական փաստաթուղթը, օրենքի

դրույթը կամ վարչական պրակտիկան մեկնաբանել է անողջամիտ, կամայական, խտրական կամ ավելի լայն, ինչը հակասել է ՄԻԵԿ-ի սկզբունքներին:

7. Արտահայտվելու ազատությունը բացարձակ իրավունք չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Միջամտությունն արտահայտվելու ազատությանը ցանկացած սահմանափակումն է, որը կիրառվել է պետական իշխանություն և լիազորություններ իրականացնող մարմնի կամ պետական ծառայության մեջ գտնվող անձի, այդ թվում՝ դատարանների, դատախազության, ոստիկանության, իրավապահ այլ մարմինների, հետախուզական ծառայությունների, կենտրոնական կամ տեղական խորհուրդների, կառավարական վարչությունների, բանակի՝ որոշում կայացնող մարմինների և պետական մասնագիտական կառույցների կողմից:

8. Համաձայն ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասի՝ որևէ միջամտություն պետք է նախատեսված լինի օրենքով: Սա նշանակում է, որ օրենքը պետք է լինի մատչելի, հստակ և բավարար չափով ճշգրիտ, որպեսզի անձինք կարողանան կարգավորել իրենց վարքագիծը: Օրենքը պետք է բավարար երաշխիքներ նախատեսի ոտնձգություն հանդիսացող սահմանափակման միջոցների նկատմամբ, այդ թվում՝ արդյունավետ վերահսկողություն դատարանի կամ այլ անկախ դատական ատյանի կողմից: Միջամտությունը պետք է նաև հետապնդի իրավաչափ նպատակ ի շահ ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հանրության ավտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջության և բարոյականության պաշտպանության, այլոց հեղինակության կամ իրավունքների պաշտպանության, գաղտնապահության կարգով ստացված տեղեկությունների բացահայտման կամ հանուն դատական իշխանության հեղինակության և անաչառության պաշտպանության: Այս ցանկը սպառիչ է, սակայն դրա մեկնաբանությունը և շրջանակն ընդլայնվում են Դատարանի պրակտիկայով: Միջամտությունը պետք է նաև անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում, ինչը նշանակում է, որ պետք է ապացուցված լինի, որ առկա է հրատապ հասարակական կարիք, որ այն հետապնդում է իրավաչափ նպատակ և որ այն նվազագույն սահմանափող միջոցն է այդ նպատակին հասնելու համար: Այս պահանջներն ամփոփված են մի լեզվով, որը մատչելի է օգտատիրոջ համար, այն է՝ արտահայտվելու ազատության սահմանափակումները չպետք է լինեն կամայական և պետք է հետապնդեն իրավաչափ նպատակ՝ ՄԻԵԿ-ի համաձայն, ինչպիսիք են, օրինակ, ազգային անվտանգությունը կամ հասարակական կարգը, հանրության առողջությունը կամ բարոյականությունը և պետք է համապատասխանեն մարդու իրավունքների իրավունքին:

9. Առցանց արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումների պարագայում Համացանցի օգտատերերի համար նախատեսվող երաշխիքների մասին ավելի մանրամասն տեղեկությունները ներառված են բացատրական հուշագրի այլ պարբերություններում: Արգելափակումն ու գտումն այդ սահմանափակումների օրինակներից են, որոնք արտահայտվելու ազատության խախտում կարող են համարվել: [Արգելափակմանն ու գտմանն](#) առնչվող որոշ ընդհանուր սկզբունքներ հիմնված են Դատարանի պրակտիկայի կամ Նախարարների կոմիտեի կողմից ընդունված այլ վերաբերելի չափորոշիչների վրա:

10. Պետական մարմինները պետք է իրականացնեն [արգելափակման և գտման](#) համազգային ընդհանուր միջոցառումներ միայն այն դեպքում, երբ ֆիլտրումը վերաբերում է շատ կոնկրետ և հստակ բովանդակության, որը հիմնված է դրա ապօրինի լինելու մասին իրավասու ներպետական մարմնի կողմից կայացված որոշման վրա, որը ենթակա է վերանայման անկախ և անկողմնակալ դատարանի կամ կարգավորող մարմնի կողմից՝ համաձայն ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի պահանջների: Պետական մարմինները պետք է ապահովեն, որ գտիչերը գնահատվեն ինչպես նախքան գտումն, այնպես էլ՝ գտման ընթացքում՝ ապահովելու, որ դրանց արդյունքները համաչափ լինեն սահմանափակման նպատակին և, ըստ այդմ, անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում՝ խուսափելու բովանդակության չարդարացված արգելափակումներից:

11. Համացանցի ինչ-որ մի նյութ արգելափակելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները չպետք է կիրառվեն կամայականորեն՝ որպես համացանցային ինչ-ինչ տեղեկությունների ընդհանուր արգելափակման միջոց: Դրանց հետևանքը չպետք է լինի մեծ քանակությամբ տեղեկություններն անհասանելի դարձնելը՝ դրանով իսկ էականորեն սահմանափակելով Համացանցի օգտատերերի իրավունքները: Դրանք պետք է նախատեսված լինեն օրենքով: Արգելափակվող տեղեկությունների ծավալի հարցում պետք է լինի լուրջ հսկողություն և արդյունավետ դատական վերանայում՝ կանխելու լիազորությունների չարաշահումը: Այդօրինակ միջոցի դատական վերանայումը պետք է ծանրութթև անի մրցակից շահերը, հավասարակշռի դրանք և որոշի, թե արդյոք առկա է պակաս ծանր միջոց կոնկրետ համացանցային նյութի մատչելիությունն արգելափակելու հարցում: Վերոհիշյալ պահանջներն ու [սկզբունքները](#) չեն կանխում հատուկ գտիչերի տեղադրումն ի պաշտպանություն անչափահասների այնպիսի վայրերում, որտեղ վերջիններիս համար կարող է հասանելի լինի Համացանցը, օրինակ՝ դպրոցներում կամ գրադարաններում:

12. **Որոնման համակարգերի** միջոցով համացանցային բովանդակության գտումն ու դեֆինդեքսավորումը կարող է հանգեցնել Համացանցի օգտատերերի արտահայտվելու ազատության սահմանափակման: Որոնման համակարգերը կարող են ազատորեն վեր հանել և ինդեքսավորել Ցանցում առկա տեղեկությունները: Դրանք չպետք է պարտավոր լինեն մշտադիտարկելու իրենց ցանցերն ու ծառայությունները նախաձեռնողաբար՝ բացահայտելու ապօրինի նյութերը և չպետք է իրականացնեն նախնական գտում կամ արգելափակում, եթե չունեն դատարանի կամ այլ իրավասու մարմնի որոշում: Կոնկրետ կայքերի դեֆինդեքսավորումը կամ գտումը պետական մարմինների պահանջով պետք է լինի թափանցիկ, նեղ և ենթարկվի պարբերական վերանայման՝ պահպանելով պատշաճ ընթացակարգի կանոնները:

13. Այս բաժնում նաև ներառված են որոշ երաշխիքներ, որոնք պետք է հասու լինեն Համացանցի օգտատերերին սահմանափակումների դեպքում՝ կենտրոնանալով, մասնավորապես, օգտատիրոջն ուղղված տեղեկատվության և այդ սահմանափակումների բողոքարկման վրա: Սրան անդրադարձ է կատարվում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ **Զտման և արգելափակման միջոցներին վերաբերող հանձնարարականում**: Համացանցի օգտատերերին պետք է տեղեկություններ հաղորդել այն մասին, թե երբ է ակտիվացվել գտումը, ինչու է գտվում կոնկրետ նյութը և հասկանալ, թե ինչպես և ինչ չափանիշներով է իրականացվում գտումը (օրինակ՝ սև ցուցակներ, սպիտակ ցուցակներ, բանալի բառի արգելափակում, նյութի վարկանիշային գնահատում, որոնման համակարգերի միջոցով առանձին կայքերի կամ նյութերի դեֆինդեքսացիա կամ գտում): Նրանց պետք է տրվեն հակիրճ տեղեկություններն խորհրդատվություն այն մասին, թե ինչպես կարելի է հաղթահարել ակտիվ գոտիչը, ավելի կոնկրետ՝ ում հետ կապվել, երբ պարզվում է, որ նյութն անհիմն կերպով արգելափակված է և այն եղանակները, որոնք թույլ կտան հաղթահարել կոնկրետ կայքի կամ նյութի նկատմամբ կիրառված գոտիչ: Օգտատերերի համար պետք է մատչելի լինեն արդյունավետ և հասանելի պաշտպանության միջոցներ, այդ թվում՝ գոտիչների կասեցում այն դեպքում, երբ օգտատերերը պնդում են, որ բովանդակության արգելափակումն անհիմն է:

14. Հնարավոր է, որ ընկերությունները, ինչպիսիք են **սոցիալական ցանցերը**, հեռացնեն Համացանցի օգտատերերի կողմից ստեղծված և տարածված նյութերը: Այս ընկերությունները կարող են նաև ապաստիվացնել օգտատերերի հասցեները (օրինակ՝ նրանց անձնական էջը կամ ներկայությունը սոցիալական ցանցում)՝ իրենց գործողությունն արդարացնելով ծառայություններից օգտվելու պայմանները չպահպանելով: Այդպիսի գործողությունները կարող են համարժեք լինել արտահայտվելու ազատության և տեղեկություններ ստանալու և տարածելու

իրավունքին միջամտությանը, եթե չեն բավարարվում ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ համաձայն Դատարանի մեկնաբանությունների:

15. Համաձայն [Միավորված ազգերի Բիզնեսի և մարդու իրավունքների ուղենիշային սկզբունքների](#)՝ (ինչը պարտադիր բնույթ ունեցող փաստաթուղթ չէ), ձեռնարկությունները պարտավոր են հարգել մարդու իրավունքները, ինչը նրանցից պահանջում է խուսափել մարդու իրավունքների վրա բացասական հետևանքներ թողնելուց կամ նպաստելուց և նախատեսեն կամ համագործակցեն այդ հետևանքների վերացման հարցում: Ըստ էության պաշտպանելու և իրավական պաշտպանության արդյունավետ միջոց տրամադրելու պարտավորությունը պետության պարտավորությունն է: Սա արտացոլված է [արտահայտվելու ազատությանը](#) նվիրված բաժնի հինգերորդ պարբերությունում: Առցանց ծառայություններ տրամադրողների կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը ենթադրում է նաև պարտավորություն պայքարելու ատելության խոսքի և որևէ այլ նյութի դեմ, որը հրահրում է բռնություն կամ խտրականություն: Առցանց ծառայություններ տրամադրողները պետք է ուշադիր լինեն այնպիսի արտահայտությունների գործածման և դրանց նկատմամբ խմբագրակազմի արձագանքի հարցում, որոնք ռասիստական, մարդատյաց, հակասեմիտիստական, կնատյաց, սեքսիստ (այդ թվում՝ ուղղված են լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսսեքսուալ անձանց դեմ) և այլն: Ծառայություններ տրամադրողները պետք է նաև պատրաստ լինեն օգնելու Համացանցի օգտատերերին հաղորդում ներկայացնելու այնպիսի նյութերի կամ տեսակետների և/կամ վարքագծի արտահայտման վերաբերյալ, որոնք կարող են ապօրինի համարվել:

16. [Ուղենիշը](#) ահազանգում է Համացանցի օգտատերերին, որ համացանցային այն ծառայություններ տրամադրողները, որոնք հոսթինգ են տրամադրում օգտատերերի կողմից ստեղծված նյութերի համար, իրավունք ունեն այլ խմբագրական գնահատականի արժանացնելու իրենց ծառայությունների շրջանակներում հրապարակվելիք նյութը: Չվնասելով իրենց խմբագրական ազատությանը՝ նրանք պետք է ապահովեն, որ Համացանցի օգտատերերի՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքի ռոնահարում տեղի չունենա՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածին հակառակ: Սա նշանակում է, որ օգտատիրոջ կողմից ստեղծված նյութի նկատմամբ սահմանափակումը պետք է լինի կոնկրետ, հիմնավոր այն նպատակի տեսանկյունից, հանուն որի կիրառվում է, և որ Համացանցի օգտատերը տեղեկացված լինի այդ մասին:

17. Համացանցի օգտատերը պետք է կարողանա տեղեկացված որոշում կայացնել այն մասին՝ օգտագործել համացանցային ծառայությունը, թե՛ ոչ: Պրակտիկայում Համացանցի օգտատերը պետք է լիովին տեղեկացված լինի իր կողմից ստեղծված նյութի հեռացման կամ իր հասցեի ապասկտիվացման կանխատեսելի հետևանքների մասին նախքան այդ միջոցների ձեռնարկումը: Համացանցի օգտատերերին նաև պետք է տրամադրել հանրամատչելի (իրենց համար հասկանալի լեզվով), հստակ և կոնկրետ տեղեկություններ նյութի հեռացման և հասցեի ապասկտիվացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների հիմքում ընկած փաստերի և հիմքերի մասին: Սա ներառում է նաև այն իրավական դրույթները, որոնք ընկած են այդ գործողությունների հիմքում և այլ տարրեր, որոնց հիման վրա գնահատվում է հետապնդվող նպատակի համաչափությունն ու իրավաչափությունը: Նրանք նաև պետք է կարողանան հայցել նյութի հեռացման և/կամ հասցեի ապասկտիվացման վերանայում, ինչը պետք է արվի ողջամիտ ժամկետներում, և դա ևս պետք է հնարավոր լինի վիճարկել իրավասու վարչական և/կամ դատական ատյանում:

18. Վեցերորդ ենթապարբերությունը վերաբերում է անանունության խնդրին: Սրա հիմքում ընկած է Դատարանի պրակտիկան, Բուդապեշտի կոնվենցիան և Նախարարների կոմիտեի այլ փաստաթղթեր: Դատարանը քննության է առել Համացանցային հաղորդագրությունների գաղտնիության հարցը մի գործով, որտեղ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունը չէր պարտավորեցրել համացանցային ծառայություն տրամադրողին բացահայտել այն անձի ինքնությունը, որն անպարկեշտ հայտարարություն էր տեղադրել անչափահասի վերաբերյալ Համացանցային ծանոթությունների կայքում: Դատարանը որոշել էր, որ չնայած արտահայտվելու ազատությունը և հաղորդակցությունների գաղտնիությունը առաջնային նկատառումներ են և որ հեռահաղորդակցության և համացանցային ծառայությունների օգտատերերը պետք է երաշխիքներ ունենան, որ իրենց անձնական կյանքի նկատմամբ հարգանքի և արտահայտվելու ազատության իրավունքները հարգվում են, նման երաշխիքները չեն կարող բացարձակ լինել և անհրաժեշտության դեպքում իրենց տեղը պետք է զիջեն այլ իրավաչափ պահանջների, ինչպիսիք են անկարգությունների կամ հանցագործությունների կանխումը կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Պետությունը պոզիտիվ պարտավորություն է կրում այնպիսի դաշտ ապահովելու հարցում, որը հավասարակշռում է այս մրցակից շահերը:

19. **Բուդապեշտի կոնվենցիան** չի քրեականացնում համակարգչային տեխնոլոգիաների օգտագործումը անանուն հաղորդակցությունների նպատակով: Համաձայն դրա **Բացատրական զեկույցի**՝ «տեղեկատվական հոսքի տվյալների

փոփոխությունն անանուն հաղորդակցության նպատակով (օրինակ՝ անանուն remailer համակարգերի գործունեությունը) կամ անվտանգ հաղորդակցության նպատակով տվյալների փոփոխումը (օրինակ՝ գաղտնագրումը) պետք է համարել մասնավոր կյանքի իրավաչափ պաշտպանություն և, հետևաբար, համարել օրինական: Այդուհանդերձ, [\[Բուդապեշտի կոնվենցիայի\]](#) կողմերը կարող են որոշել քրեականացնել անանուն հաղորդակցությունների որոշակի չարաշահումները, ինչպիսիք են՝ packet header տեղեկությունների փոփոխությունը հանցագործի ինքնությունը թաքցնելու նպատակով»:

20. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն վերահաստատել է անանունության սկզբունքը [Համացանցով հաղորդակցվելու ազատության մասին](#) իր հռչակագրում: Համապատասխանաբար, առցանց գաղտնալսումներից պաշտպանվելու կամ արտահայտվելու ազատության հզորացման նպատակով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է հարգեն Համացանցի օգտատերերի՝ իրենց ինքնությունը չբացահայտելու ցանկությունը: Այդուհանդերձ, հարգանքն անանունության նկատմամբ չի արգելում անդամ պետություններին ձեռնարկելու միջոցներ՝ հայտնաբերելու հանցագործներին՝ համաձայն ներպետական օրենսդրության, ՄԻԵԿ-ի և արդարադատության և ոստիկանության ոլորտում կնքված այլ միջազգային պայմանագրերի:

Տես [Բացատրական հուշագրի](#) ամբողջական տեքստն այստեղ:

## Հավաքներ, միավորումներ և մասնակցություն

**Դուք ունեք Համացանցից օգտվելով այլոց հետ խաղաղ հավաքներանցկացնելու և միավորումներ կազմելու իրավունք:**

Գործնականում դա նշանակում է.

Դուք ազատ եք ընտրելու ցանկացած կայք, կիրառական ծրագիր կամ այլ ծառայություն սոցիալական խմբեր և հավաքներկազմելու, միանալու, մոբիլիզացնելու և մասնակցելու նպատակով՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք պաշտոնապես ճանաչված են պետական մարմինների կողմից, թե՛ ոչ: Դուք պետք է կարողանաք նաև օգտվել Համացանցից արհմիություններ կազմելու և դրանց միանալու՝ Ձեր իրավունքի իրականացման համար:

**Դուք ունեք առցանց խաղաղ բողոքներ անցկացնելու իրավունք:** Այդուհանդերձ, դուք պետք է տեղյակ լինեք, որ եթե ձեր առցանց բողոքները հանգեցնում են

արգելափակման, ծառայությունների խաթարման և/կամ այլոց սեփականությանը վնասի պատճառման, դա կարող է ունենալ իրավական հետևանքներ:

**Դուք ազատ եք օգտագործելու Ձեր առցանց գործիքները մասնակցելու տեղական, ազգային և համաշխարհային հանրային քաղաքականության քննարկումներին, օրենսդրական նախաձեռնություններին և որոշումների կայացման գործընթացների հանրային վերահսկողությանը, այդ թվում՝ Համացանցի կառավարման հարցով խնդրագրեր ստորագրելու և քաղաքականության մշակմանը մասնակցելու իրավունք:**

### **Ամփոփելով՝**

Օգտատերերն ազատ են ընտրելու ցանկացած կայք, կիրառական ծրագիր կամ այլ ծառայություն միավորումներ կազմելու և հավաքներ անցկացնելու նպատակով:

Նրանք նաև իրավունք ունեն խաղաղ բողոքներ անցկացնելու առցանց:

Այդուհանդերձ, նրանք պետք է տեղյակ լինեն այն իրավական հետևանքներին, որոնք կարող են ծագել, եթե առցանց բողոքը հանգեցնի արգելափակումներ, ծառայությունների խաթարման և/կամ սեփականությանը պատճառվող վնասի:

## **Հավաքներ, միավորումներ և մասնակցություն**

### **Բացատրական հուշագիր**

1. Հավաքների և միավորումների ազատության իրավունքն ամրագրված է [Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի \(ՄԻԵԿ\) 11-րդ հոդվածում](#): Այն նաև վերաբերում է ի պաշտպանություն քաղաքական խոսքի՝ Դատարանի սահմանած սկզբունքներին, մասնավորապես՝ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասով շատ քիչ հնարավորություն կա սահմանափակելու քաղաքական խոսքը կամ հանրային շահերին վերաբերող հարցերի քննարկումը:

2. Օգտատերն իրավունք ունի Համացանցի միջոցով անցկացնելու հավաքներ և միավորվելու այլոց հետ: Սա ներառում է սոցիալական խմբեր և հավաքներ, ինչպես նաև արհմիություններ կազմելը, դրանց միանալը, մոբիլիզացնելը և մասնակցելը Համացանցի վրա հիմնված գործիքների օգտագործմամբ: Սա նաև ներառում է տեղեկատվական արշավի կամ քաղաքացիական այլ գործընթացի մասնակցելու նպատակով խնդրագրեր ստորագրելը: Օգտատերը պետք է ազատ լինի իր իրավունքների իրականացման նպատակով գործիքներ, այդ թվում՝ կայքեր, կիրառական ծրագրեր կամ այլ ծառայություններ ընտրելու հարցում: Այս իրավունքի իրականացումը պայմանավորված չէ պետական մարմինների կողմից այս սոցիալական խմբերի և հավաքների պաշտոնական ճանաչումով:

3. Բողոքի իրավունքը պետք է հնարավոր լինի իրականացնել հավասարապես ցանցում և ցանցից դուրս: Բողոքները, որոնք կարող են հետևանք ունենալ լայն հանրության համար, ինչպիսիք են ինչ-որ տիրույթի արգելափակումը կամ խաթարումը, ընդգրկված են ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածով նախատեսված հավաքների ազատության իրականացման սահմանների մեջ: Այդուհանդերձ, միշտ չէ, որ դա այդպես կարող է լինել, երբ այդպիսի գործողությունները խաթարում են առցանց ծառայությունները, ինչպիսիք են որևէ կայք կամ սահմանափակում ունեցող առցանց տիրույթ առանց թույլտվության մուտք գործելը կամ առանց թույլտվության թվային նյութը տնօրինելը: Ըստ էության, կարևոր է ուսուցանել օգտատիրոջը, որ առցանց բողոքի այնպիսի ազատությունը և հետևանքները, որոնք հանգեցնում են խաթարման, չեն կարող ազատորեն ընդունելի լինել:

4. Համացանցը դարձել է մի գործիք, որի միջոցով քաղաքացիներն ակտիվորեն մասնակցում են ժողովրդավարական հասարակությունների կառուցմանն ու ամրապնդմանը: Նախարարների կոմիտենի անդամ պետություններին [առաջարկել է մշակել](#) և իրականացնել ռազմավարություններ էլեկտրոնային ժողովրդավարության, էլեկտրոնային մասնակցության և էլեկտրոնային կառավարման ոլորտում՝ օգտվելով տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներից (ՏՀՏ) ժողովրդավարական գործընթացներում և քննարկումներում ինչպես պետական մարմինների և քաղաքացիական հասարակության միջև հարաբերություններում, այնպես էլ պետական ծառայությունների տրամադրման հարցում:

5. Սա ներառում է տեղական, ազգային և համաշխարհային հանրային քաղաքականության, ինչպես նաև որոշումների ընդունման գործընթացների քննարկումներին մասնակցելու ազատությունը, այդ թվում՝ ՏՀՏ-ների օգտագործման միջոցով խնդրագրերի ստորագրման իրավունքը: Սա հիմնված է Նախարարների կոմիտեի՝ իր անդամ պետություններին ուղղված առաջարկությունների վրա խթանելու ՏՀՏ-ների օգտագործումը քաղաքացիների կողմից (այդ թվում՝ առցանց ֆորումները, ցանցային գրանցամատյանները, քաղաքական գրուցարանները և քաղաքացիների միջև հաղորդակցությունների այլ ձևերը)՝ մասնակցելու ժողովրդավարական քննարկումներին, էլեկտրոնային ակտիվիզմին և տեղեկատվական արշավներին, ներկայացնելու իրենց մտահոգությունները, գաղափարներն ու նախաձեռնությունները, խթանելու երկխոսություն և քննարկում ներկայացուցիչների և կառավարության հետ և հանրային շահերին վերաբերող հարցերում վերահսկելու պաշտոնատար անձանց և քաղաքական գործիչներին:

Բացատրական հուշագրի ամբողջական տեքստը տես այստեղ:

## Անձնական կյանքի գաղտնիություն և տվյալների պաշտպանություն

**Դուք ունեք Համացանցում անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք, ինչը ներառում է Ձեր անհատական տվյալների պաշտպանությունը, ինչպես նաև Ձեր նամակագրության և հաղորդակցությունների գաղտնիության նկատմամբ հարգանքի իրավունքը:**

Սա նշանակում է, որ.

**Դուք պետք է տեղյակ լինեք, որ Համացանցի օգտագործման հետևանքով կանոնավոր կերպով մշակվում են ձեր անհատական տվյալները:** Սա տեղի է ունենում, երբ դուք օգտվում եք այնպիսի ծառայություններից, ինչպիսիք են գննարկիչները, էլ. փոստը, ակնթարթային հաղորդագրությունները, Համացանցով ձայնի փոխանցման կանխագրերը, սոցիալական ցանցերը, որոնման համակարգերը և ամպային տվյալների պահպանման ծառայությունները:

**Պետական մարմինները և մասնավոր ընկերությունները պարտավոր են հարգել հատուկ կանոններ և ընթացակարգեր Ձեր անհատական տվյալները մշակելիս:**

**Ձեր անհատական տվյալները պետք է մշակվեն միայն օրենքով նախատեսված լինելու դեպքում կամ երբ տվել եք Ձեր համաձայնությունը:** Դուք պետք է տեղեկացված լինեք այն մասին, թե ինչ անհատական տվյալներ են մշակվում և/կամ փոխանցվում երրորդ անձանց, երբ, ում կողմից և ինչ նպատակով: Ընդհանուր առմամբ, դուք պետք է կարողանաք հսկողություն իրականացնել ձեր անհատական տվյալների նկատմամբ (ստուգել դրանց ճշգրտությունը, հայցել ուղղումներ, դրանց հեռացում կամ որ անհատական տվյալները չպահպանվեն ավելի երկար, քան անհրաժեշտ է):

**Դուք չպետք է ենթարկվեք ընդհանուր բնույթի գաղտնալսման կամ հաղորդակցության գաղտնի առգրավման միջացների:** Օրենքով նախատեսված բացառիկ հանգամանքներում կարող է լինել միջամտություն Ձեր անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին Ձեր անհատական տվյալների ձեռքբերման միջոցով, օրինակ՝ նախաքննության ընթացքում: Այս կապակցությամբ Ձեզ համար պետք է հասանելի լինի մատչելի, հստակ և ճշգրիտ տեղեկատվություն վերաբերելի օրենսդրության, քաղաքականության և Ձեր իրավունքների մասին:

**Ձեր անձնական կյանքի գաղտնիությունը պետք է հարգվի նաև աշխատավայրում:** Սա ներառում է Ձեր մասնավոր առցանց նամակագրության և այլ հաղորդակցությունների գաղտնիությունը: Ձեր գործատուն պետք է տեղեկացնի Ձեզ յուրաքանչյուր դեպքում, երբ կորոշի գաղտնալուսումներ կամ ստուգումներ իրականացնել:

**Ձեզ կարող են օգնել տվյալների պաշտպանության հարցերով զբաղվող մարմինները,** որոնք գործում են եվրոպական պետությունների մեծ մասում՝ ապահովելու, որպեսզի տվյալների պաշտպանության մասին օրենքներն ու սկզբունքները կիրառվեն:

### **Ամփոփելով՝**

Օգտատերերի անհատական տվյալները կարող են մշակվել միայն նրանց համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված դեպքում: Օգտատերերը պետք է տեղեկացված լինեն, թե ինչ անհատական տվյալներ են մշակվում կամ փոխանցվում երրորդ անձանց, երբ, ում կողմից, ինչ նպատակով և կարողանան հսկողություն իրականացնել դրանց նկատմամբ: Օգտատերերը չպետք է ենթարկվեն ընդհանուր բնույթի գաղտնալուսումների կամ տեղեկատվության գաղտնի առգրավման միջոցառումների, բացառությամբ այնպիսի բացառիկ հանգամանքների, որոնք նախատեսված են օրենքով, ինչպես օրինակ՝ նախաքննության ժամանակ:

## **Անձնական կյանքի գաղտնիություն, տվյալների պաշտպանություն**

### **Բացատրական հուշագիր**

1. Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքն ամրագրված է [ՄԻԵԿ](#)-ի 8-րդ հոդվածով: Այս իրավունքի մեկնաբանությունները տվել է Դատարանն իր պրակտիկայով, և դրանք լրացվել և վերահաստատվել են Եվրոպայի խորհրդի [108-րդ կոնվենցիայով](#):

2. Անձնական կյանքը մի հասկացությունը, որը ենթակա չէ սպառիչ սահմանման: Դատարանն ընդգծել է, որ 8-րդ հոդվածը ներառում է շահերի լայն շրջանակ, այդ թվում՝ անձնական և ընտանեկան կյանքը, բնակարանը և նամակագրությունը, այդ թվում՝ աշխատավայրում վարվող փոստային, հեռախոսային և էլ. փոստի հաղորդագրությունները: Անձնական կյանքը վերաբերում է իր պատկերի, այդ թվում՝ լուսանկարների և տեսանյութերի նկատմամբ անձի իրավունքին: Այն նաև վերաբերում է անձի ինքնությանն ու անձնական զարգացմանը, այլ մարդկանց հետ

հարաբերություններ հաստատելուն և զարգացնելուն: Սա վերաբերում է նաև մասնագիտական կամ գործարար բնույթի տվյալներին:

3. Օգտատերերի շատ գործողություններ ներառում են անհատական տվյալների ավտոմատացված մշակման ձևեր: Օրինակները ներառում են գննարկիչները, էլ. փոստը, ակնթարթային հաղորդագրությունները, Համացանցով ձայնի փոխանցման կանխագրերը, սոցիալական ցանցերը և որոնման համակարգերն ու ամպային տվյալների պահպանման ծառայությունները: **108-րդ կոնվենցիան** կիրառելի է Համացանցով կատարվող բոլոր գործողությունների նկատմամբ, այդ թվում՝ անհատական տվյալների հավաքման, պահպանման, փոփոխման, հեռացման, որոնման կամ տարածման:

4. Կան սկզբունքներ և կանոններ, որոնք պետք է հարգեն այն պետական մարմիններն ու մասնավոր ընկերությունները, որոնք զբաղվում են անհատական տվյալների մշակմամբ: Անհրաժեշտ է, որպեսզի օգտատերը տեղյակ լինի և հասկանա, թե իր որ տվյալներն են մշակվում և ինչպես և թե արդյոք այս առնչությամբ կարելի է գործողություններ ձեռնարկել, օրինակ՝ խնդրել ուղղումներ կատարել կամ հեռացնել տվյալները: Համաձայն **108-րդ կոնվենցիայի**, անհատական տվյալները պետք է ստանալ արդար և իրավաչափ կերպով և պահպանել կոնկրետ և օրինական նպատակներով: Դա պետք է լինի տեղին, վերաբերելի և ոչ չափազանց այդ տվյալների պահպանման նպատակների առնչությամբ, ճշգրիտ և անհրաժեշտության դեպքում դրանք պետք է թարմացվեն, պահպանվեն այնպես, որ հնարավոր լինի նույնականացնել այն անձին, որի անհատական տվյալները մշակվում են և ոչ՝ ավելի երկար ժամկետով, քան անհրաժեշտ է այդ տվյալների պահպանման նպատակներից ելնելով:

5. Շեշտը դրվում է անհատական տվյալների մշակման երկու կոնկրետ սկզբունքների վրա. մշակման իրավաչափությունը և օգտատիրոջ համաձայնությունը: Օգտատերը պետք է տեղեկացված լինի, որ տվյալները կարելի է մշակել միայն այն ժամանակ, երբ դա նախատեսված է օրենքով և երբ նա տվել է իր համաձայնությունը, օրինակ՝ համաձայնելով համացանցային ծառայությունից օգտվելու պայմաններին և նորմերին:

6. Ներկայումս քննարկվում է անհատական տվյալների Համացանցով մշակման վերաբերյալ անձի ազատ, կոնկրետ, տեղեկացված և բացահայտ (աներկբա) համաձայնության ներառումը **108-րդ կոնվենցիայում**: Իրազեկված համաձայնության հարցին է անդրադառնում Նախարարների կոմիտեի թիվ **CM/Rec(2012)4** հանձնարարականն ուղղված անդամ պետություններին

սոցիալական ցանցերի ծառայությունների ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ: Մասնավորապես՝ սոցիալական ցանցերը պետք է ձեռք բերեն իրենց օգտատերերի տեղեկացված համաձայնությունը նախքան նրանց անհատական տվյալները տարածելը կամ մարդկանց կամ ընկերությունների հետ փոխանակելը կամ օգտագործելը որևէ այլ կերպ, քան անհրաժեշտ է այն կոնկրետ նպատակներից ելնելով, որոնց համար դրանք սկզբնապես հավաքվել են: Օգտատերերի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով նրանք պետք է «ընտրեն», որ համաձայն են, որ իրենց անհատական տվյալները մատչելի լինեն երրորդ անձանց լայն շրջանակների (օրինակ՝ երբ սոցիալական ցանցերում գործարկվում են երրորդ անձանց կիրառական ծրագրեր): Նմանապես և օգտատերերը պետք է կարողանան հետ վերցնել իրենց համաձայնությունը:

7. Կարևոր է նաև հաշվի առնել Նախարարների կոմիտեի իր անդամ պետություններին ուղղված թիվ [CM/Rec\(2010\)13](#) հանձնարարականը նկարագրերի հավաքման (profiling) շրջանակներում անհատական տվյալների ավտոմատացված մշակման առնչությամբ անձանց պաշտպանության վերաբերյալ: Սա հայտնի է որպես անձի նկարագրի հավաքման միջոցով տվյալների ավտոմատացված մշակում նրա վերաբերյալ որոշումներ կայացնելու կամ նրա անձնական նախընտրությունները, վարքագիծը կամ մոտեցումները վերլուծելու կամ կանխատեսելու նպատակով: Օրինակ՝ Համացանցի օգտատիրոջ անհատական տվյալները կարող են հավաքվել և մշակվել որևէ կայքի կամ կիրառական ծրագրի հետ՝ վերջինիս առնչության կապակցությամբ կամ նրա կողմից գննարկվող կայքերի ժամանակի ընթացքում ուսումնասիրության արդյունքում (օրինակ՝ հավաքելով տեղեկություններ այն մասին, թե ինչ էջեր կամ նյութեր է նա այցելում, ինչ է փնտրում կամ ինչ հղումներ է սեղմում): «Թխուկները» օգտատերերի գննարկման գործունեությանը հետևելու միջոցներից մեկն են. սա արվում է օգտատիրոջ սարքավորման մեջ տեղեկությունները պահպանելու և հետո գայում դրանք վերստին երևան բերելու միջոցով: Հանձնարարականը նախատեսում է նկարագրերի հավաքման նպատակով Համացանցի օգտատերերի անհատական տվյալների օգտագործման վերաբերյալ նրանց համաձայնության իրավունքը, ինչպես նաև այդ համաձայնությունը հետ վերցնելու իրավունքը:

8. Համացանցի օգտատերերի տեղեկացվածության իրավունքներն իրենց վերաբերող անհատական տվյալների մշակման վերաբերյալ արտացոլված են Եվրոպայի խորհրդի բազում իրավական փաստաթղթերում: [108-րդ կոնվենցիան](#) նախատեսում է, որ տվյալների սուբյեկտը պետք է կարողանա պարզել, որ իրավաբանական կամ ֆիզիկական անձինք մշակում են իրենց անհատական տվյալները, թե ինչ նպատակով

է դա արվում և մշակող մարմնի ինքնությունը, բնակության կամ գործունեության վայրը, ինչպես նաև ողջամիտ ժամկետներում և առանց մեծ ուշացումների կամ ծախսերի ստանալ հաստատումն այն փաստի, թե արդյոք իր մասին պահպանվում են անհատական տվյալներ և որ այդ տվյալները հաղորդվեն իր համար ընթեռնելի ձևով:

9. Օգտատերերի տեղեկացվածության հարցին նաև անդրադարձ է կատարում Նախարարների կոմիտեի [CM/Rec\(2012\)4](#) հանձնարարականը սոցիալական ծառայությունների ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ: Սոցիալական ցանցերի օգտատերերը պետք է տեղեկացված լինեն հստակ և հասկանալի եղանակով ծառայություններ տրամադրողների պայմանների և նորմերների յուրաքանչյուր փոփոխության մասին: Սա նաև ներառում է այլ գործողություններ, ինչպիսիք են երրորդ կողմի կիրառական ծրագրերի տեղադրումը, ինչը կարող է ռիսկի ենթարկել օգտատերերի անձնական կյանքի գաղտնիությունը, սոցիալական ցանցերի ծառայությունների իրականացման նկատմամբ կիրառելի օրենքը և անհատական տվյալների մշակումը, իրենց անձնական էջեր և հաղորդակցություններ ազատ մուտքի (ժամանակի և աշխարհագրության առումով) հետևանքները, այդ թվում՝ բացատրությունները, թե որոնք են մասնավոր և հանրային հաղորդակցության տարբերությունները, տեղեկությունների հանրայնացման հետևանքները, այդ թվում՝ երրորդ անձանց կողմից տվյալների անսահմանափակ մատչելիությունը և նրանց կողմից այդ տվյալների հավաքումը և մարդկանց համաձայնության ձեռքբերումը նախքան նրանք կիրառարակեն իրենց անհատական տվյալները, այդ թվում՝ ձայնա և տեսանյութերը այն դեպքերում, երբ մատչելիությունն ընդլայնված է և ներառում է ոչ միայն ընտրյալ անձանց: Համացանցի օգտատերերը պետք է նաև ստանան կոնկրետ տեղեկություններ այն մասին, թե որոնք են իրենց նկարագրերը հավաքելու տրամաբանությունը և նպատակները:

10. Համացանցի օգտատերերը պետք է կարողանան հսկողություն իրականացնել իրենց անհատական տվյալների նկատմամբ՝ համաձայն [108-րդ կոնվենցիայի](#), այդ թվում՝ իրավունք ունենան հայցելու այն տվյալների ուղղում կամ հեռացում, որոնք մշակվել են օրենքի խախտմամբ, ինչպես նաև իրավական պաշտպանության միջոց այն դեպքում, երբ հաստատման, հաղորդակցման, ուղղման կամ հեռացման պահանջը չի բավարարվել:

11. Նախարարների կոմիտեի թիվ [CM/Rec\(2012\)3](#) հանձնարարականն անդամ պետություններին որոնման համակարգերի ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության մասին վերաբերում է մի շարք միջոցառումների, որ

ծառայություններ տրամադրողները կարող են ձեռնարկել՝ պաշտպանելու իրենց օգտատերերի անձնական կյանքի գաղտնիության իրավունքը: Սա ներառում է անհատական տվյալների պաշտպանությունն ընդդեմ երրորդ կողմերին դրանք ոչ իրավաչափորեն մատչելի դարձնելու, ինչպես նաև տվյալների խաթարման ծանուցման սխեմաները: Միջոցառումները պետք է ներառեն նաև օգտատիրոջ և որոնման համակարգի ծառայություն տրամադրողի միջև հաղորդակցության «ծայրից ծայր» գաղտնագրումը: Որոնման համակարգին պատկանող տարբեր ծառայություններից/հարթակներից ծագող տվյալների փոխհարաբերումը կարող է տեղի ունենալ միայն եթե առկա է օգտատիրոջ աներկբա համաձայնությունը տրված կոնկրետ այդ ծառայությանը: Օգտատերերի համար պետք է մատչելի լինեն իրենց տվյալները, նրանք պետք է կարողանան ուղղել և հեռացնել դրանք, այդ թվում՝ այն նկարագրերը, որոնք ստեղծվում են մարքեթինգի նպատակներով:

12. Սոցիալական ցանցերը պետք է օժանդակեն նաև իրենց օգտատերերին իրենց տվյալների կառավարման և պաշտպանության հարցում հետևյալով.

- Ի սկզբանե ունենալով գաղտնիության համար նպաստավոր կարգավորումներ՝ սահմանափակելու օգտատիրոջ կողմից ընտրված և մատնանշված անձանց կողմից դրանց մատչելիությունը: Սա ներառում է նրանց գաղտնիության կարգավորումների փոփոխությունները և իրենց տվյալների հանրային մատչելիության աստիճանի ընտրությունը,
- Ջգայուն տվյալների, այդ թվում՝ կենսաչափական տվյալների կամ դեմքերի ճանաչմամբ մուտքի, ավելի մեծ պաշտպանություն, որոնք ի սկզբանե չպետք է ակտիվացված լինեն,
- Տվյալների պաշտպանություն օգտատիրոջ անհատական տվյալների՝ երրորդ անձանց կողմից ոչ իրավաչափ մատչելիությունից, այդ թվում՝ օգտատիրոջ և սոցիալական ցանցերի միջև մի ծայրից մյուս ծայր հաղորդակցության գաղտնագրումը: Օգտատերերը պետք է տեղեկացված լինեն իրենց անհատական տվյալների անվտանգության խախտումների մասին, որպեսզի կարողանան այնպիսի կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել, ինչպիսիք են իրենց գաղտնաբառերի փոփոխությունը և զգոնությունը ֆինանսական գործարքների հարցում (օրինակ՝ երբ սոցիալական ցանցերը տիրապետում են օգտատիրոջ բանկային կամ վարկային քարտերի տվյալներին),
- Ծրագրված գաղտնիություն, այն է՝ տվյալների պաշտպանության կարիքների բավարարում ծառայությունների կամ ապրանքների նախագծման փուլում և անձնական տվյալների գաղտնիության վրա գործող ծառայությունների փոփոխությունների ազդեցության գնահատում,
- Սոցիալական ցանցերից չօգտվողների պաշտպանություն նրանց անհատական տվյալները, այդ թվում՝ էլ. փոստի հասցեները և կենսաչափական տվյալները

չհավաքելու և չմշակելու միջոցով: Օգտատերերը պետք է տեղյակ լինեն, թե ինչ պարտականություններ ունեն այլ անձանց նկատմամբ, մասնավորապես՝ որ այլ անձանց վերաբերող անհատական տվյալների հրապարակումը պետք է իրականացվի այդ անձանց իրավունքները հարգելով:

13. Նախքան սոցիալական ցանցի օգտատիրոջ հասցեի փակումը նա պետք է կարողանա հեշտորեն և ազատորեն տեղափոխել իր տվյալները այլ ծառայության կամ սարքի տիրույթ օգտագործելի ձևաչափով: Հասցեն փակելու պարագայում տվյալ օգտատիրոջից ստացված կամ նրան վերաբերող բոլոր տվյալները պետք է մեկընդմիջտ հեռացվեն սոցիալական ցանցի ծառայության շտեմարաններից: Ի լրումն սրա՝ Համացանցի օգտատերերը պետք է կարողանան իրազեկ ընտրություն կատարել իրենց առցանց ինքնության, այդ թվում՝ կեղծանվան օգտագործման վերաբերյալ: Այն դեպքում, երբ սոցիալական ցանցի ծառայությունը պահանջում է գրանցել իրական ինքնությունը, Համացանցում այդ իրական ինքնության հրապարակումը պետք է լինի ոչ պարտադիր օգտատերերի համար: Սա չի արգելում, որ իրավապահ մարմինները բացահայտեն օգտատիրոջ իրական ինքնությունը ըստ անհրաժեշտության և պահպանելով մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու ոլորտում առկա համապատասխան իրավական երաշխիքները:

14. Նկարագրերի հավաքման ենթատեքստում օգտատերը պետք է կարողանա առարկել նաև նկարագրերի հավաքման նպատակով իր անհատական տվյալների օգտագործմանը և գուտ նկարագրերի հավաքման նպատակով կայացված որոշմանը, որն իրավական հետևանքներ է ունենալու իր համար կամ լրջորեն անդրադառնալու է նրա վրա, եթե դա նախատեսված չէ օրենքով, որը միջոցներ է նախատեսում երաշխավորելու օգտատերերի իրավաչափ շահերը, մասնավորապես՝ թույլատրելով նրանց ներկայացնելու իրենց տեսակետը և եթե որոշումը չի ընդունվել պայմանագրի կատարման ընթացքում և պայմանով, որ ձեռնարկված են Համացանցի օգտատիրոջ իրավաչափ շահերը երաշխավորելու միջոցներ:

15. Համացանցի օգտատիրոջ իրավունքները բացարձակ չեն. այստեղից էլ երրորդ ենթապարբերության «ընդհանուր առմամբ» արտահայտությունը: Շեղումները թույլատրելի են միայն, եթե նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ի շահ. (ա) պետական անվտանգության, հանրության անվտանգության, պետության ֆինանսական շահերի պաշտպանության կամ հանցագործությունների դեմ պայքարի, և (բ) պաշտպանելու տվյալների սուբյեկտին կամ այլոց իրավունքներն ու ազատությունները: Նախատեսված իրավունքների իրականացման սահմանափակումները կարող են նախատեսված

լինել օրենքով վիճակագրական կամ գիտահետազոտական նպատակով օգտագործվող անհատական տվյալների ավտոմատացված ֆայլերի առնչությամբ, երբ ակնհայտ է, որ առկա չէ տվյալների սուբյեկտների անձնական կյանքի գաղտնիության ոտնահարում:

16. Տվյալների գաղտնի առգրավումը վերաբերում է հաղորդակցության բովանդակության լսմանը, մշտադիտարկմանը կամ գաղտնալսմանը, տվյալների բովանդակության ձեռքբերմանը համակարգչային համակարգ մուտք գործելով և օգտագործելով կամ անուղղակիորեն էլեկտրոնային եղանակով ականջ դնելու կամ գաղտնալսման սարքերի օգտագործմամբ: Գաղտնի առգրավումը կարող է ներառել նաև ձայնագրառումը: Նամակագրության և այլ հաղորդագրությունների գաղտնիությունը հարգելու իրավունքն ամրագրված է ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածում, որին մեկնաբանություններ է տվել նաև Դատարանը: Նամակագրություն հասկացությունը ներառում է փոստային և հեռահաղորդակցական միջոցներով վարվող նամակագրությունն ու էլ. փոստը նաև աշխատավայրում: Ակնկալվում է, որ այս հասկացության հետագա մեկնաբանությունները հաշվի կառնեն տեխնոլոգիական զարգացումները, որոնք կարող են բերել Համացանցով հաղորդակցվելու այլ ձևերը, ինչպիսիք են էլ. փոստի հաղորդագրությունները, ակնթարթային հաղորդագրությունները և այլն 8-րդ հոդվածի պաշտպանության տակ:

17. Համացանցին չվերաբերող գործերից մի քանիսով հաղորդագրությունների գաղտնի առգրավման և գաղտնալսման, ինչպես նաև պետական մարմինների միջամտության առնչությամբ Դատարանի պրակտիկայով հաստատված սկզբունքները ներկայացված են ստորև: Այս սկզբունքներն ընդհանուր ուղենիշներ են առաջարկում, որոնք ապագայում կիրառելի են համացանցային հաղորդակցությունների նկատմամբ:

18. Նամակագրության և հեռահաղորդակցությունների գաղտնի առգրավումը միջամտությունը է անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին և պետք է բավարարի ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները: Հեռահաղորդակցությունները գաղտնալսող օրենսդրության գոյությունն անգամ կարող է համարվել միջամտություն անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին: Օրենքը, որը սահմանում է գաղտնալսման համակարգ, որի պայմաններում պետությունում գտնվող յուրաքանչյուր անձի փոստն ու հեռահաղորդակցությունը կարող են գաղտնալսվել, ուղղակիորեն ազդում է այդ պետությունում փոստային և հեռահաղորդակցության ծառայությունների բոլոր օգտատերերի կամ հավանական օգտատերերի վրա: Դատարանը, հետևաբար,

ընդունել է, որ անձը կարող է որոշակի հանգամանքներում հայտարարել, որ տուժել է խախտումից գաղտնի միջոցների կամ դրանք թույլատրող օրենսդրության թեկուզև միայն գոյության պայմաններում՝ առանց ստիպված լինելու ապացուցել, որ այդ միջոցները կիրառվել են իր նկատմամբ:

19. Հաղորդակցության գաղտնի առգրավումը պետք է ունենա իրավական հիմքեր և անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում ի շահ ազգային անվտանգության, հասարակական անվտանգության, կամ պետության տնտեսական բարեկեցության, անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պատպանության՝ համաձայն ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի: Դատարանը մշակել է հետևյալ ընդհանուր սկզբունքները՝ մատնանշելով, որ պետական մարմինների կողմից նամակագրության և հաղորդակցության գաղտնալսում նախատեսող օրենսդրությունը պետք է լինի.

- Կանխատեսելի. օրենքը պետք է մատչելի լինի անձի համար, ով պետք է կարողանա կանխատեսել իր հանդեպ դրա կիրառության հետևանքները: Օրենքը պետք է նաև ձևակերպված լինի բավական պարզ ու հստակ, որպեսզի քաղաքացիները բավարար պատկերացում ստանան այն պայմանների և հանգամանքների մասին, որոնց պարագայում պետական մարմիններն իրավասու են ապավինելու այս գաղտնի և հավանաբար նաև վտանգավոր միջամտությանը անձի մասնավոր կյանքին և նամակագրությանը:
- Նախատեսի նվազագույն երաշխիքներ պետական մարմինների հայեցողության հարցում. օրենքը պետք է հստակ կանոններ սահմանի. (i) այն հանցագործությունների տեսակների մասին, որոնք կարող են հանգեցնել գաղտնալսման որոշման, (ii) սահմանի այն անձանց խմբերը, որոնց հաղորդակցությունները կարող են գաղտնալսվել, (iii) նման գաղտնալսումների տևողությունը, (iv) այն ընթացակարգը, որը հարկ է պահպանել ստացված տվյալների ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ընթացքում, և (v) այն նախազգուշական միջոցները, որոնք հարկ է ձեռնարկել այլ կողմերին տվյալները հաղորդելիս, ինչպես նաև այն հանգամանքները, որոնցում ստացված տվյալները պետք է ջնջվեն կամ ոչնչացվեն:
- Իրավասու մարմինների կողմից հսկողության և վերանայման հնարավորություն. Դատարանը պահանջում է, որպեսզի չարաշահումների դեմ առկա լինեն համապատասխան և արդյունավետ երաշխիքներ:

20. Աշխատավայրում անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի վերաբերյալ՝ Դատարանի պրակտիկան սահմանել է, որ կազմակերպության տարածքում աշխատողի կողմից կատարված հեռախոսազանգերը մտնում են

անձնական կյանքի և նամակագրության գաղտնիության հասկացության մեջ: Աշխատավայրից ուղարկված էլ. փոստը, ինչպես նաև Համացանցի անձնական օգտագործման արդյունքում ստացված տեղեկությունները ևս պետք է պաշտպանվեն ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով: Եթե առկա չէ նախազգուշացում, որ դրանք ստուգվելու են, աշխատողն ունի ողջամիտ ակնկալիք, որ իր անձնական կյանքի գաղտնիությունը աշխատավայրում հեռախոսազանգերի, էլ. փոստի և Համացանցի օգտագործման ոլորտում հարգվում է: Օգտատիրոջը կարող են օգնել տվյալների պաշտպանությամբ զբաղվող մարմինները կամ անդամ պետություններ այլ իրավասու մարմիններ:

21. Տվյալների պաշտպանությամբ զբաղվող մարմինները անդամ պետությունների մեծ մասում կարևոր դեր են խաղում անհատական տվյալների մշակման նմատմամբ միջամտությունը քննության առնելու, թույլ չտալու, իրազեկելու կամ այլ կերպ դրանց պաշտպանությունն ապահովելու հարցում: Եվ սա ի հեճուկս այն առաջնային դերի, որ պետությանն է պատկանում՝ ապահովելու անհատական տվյալների պաշտպանությունը անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի երաշխավորման իրենց պարտավորությունների շրջանակներում:

Տես [Բացատրական հուշագրի](#) ամբողջական տեքստն այստեղ:

## Կրթություն և գրագիտություն

**Դու ունեք կրթության իրավունք, այդ թվում՝ գիտելիք ստանալու:**

Սա նշանակում է, որ.

**Ձեզ համար պետք է առցանց մատչելի լինեն կրթությունը և մշակութային, գիտական, դասախոսական և այլ նյութերը պաշտոնական լեզուներով:** Նման մատչելիությունը կարող է պայմանավորված լինել որոշակի պայմաններով՝ կապված իրավատերերին իրենց աշխատանքի համար վարձատրելով: Ձեզ համար պետք է նաև ազատորեն մատչելի լինեն պետական ֆինանսավորմամբ գիտահետազոտական և մշակութային աշխատանքները Համացանցի հանրային տիրույթում, եթե այդպիսիք կան:

**Որպես Համացանցի և այլ մեդիա գրագիտության բաղադրիչ՝ Ձեզ համար մատչելի պետք է լինի թվային կրթությունը և գիտելիքները, որպեսզի կարողանաք Համացանցում իրականացնել ձեր իրավունքներն ու ազատությունները:** Սա ներառում է այնպիսի հմտություններ, որոնք թույլ կտան Ձեզ ընկալել, օգտագործել և աշխատել բազում համացանցային գործիքներով: Սա պետք է թույլ տա Ձեզ քննադատաբար վերլուծելու այն նյութի, կիրառական ծրագրերի և ծառայությունների ճշգրտությունն

ու արժանահավատությունը, որը Ձեզ համար մատչելի է կամ որը ցանկանում եք, որ մատչելի լինի:

### **Ամփոփելով՝**

Որպես Համացանցի և մեդիա գրագիտության բաղադրիչ՝ օգտատերերի համար պետք է մատչելի լինի թվային կրթությունը և գիտելիքը, որպեսզի նրանք կարողանան Համացանցով իրականացնել իրենց իրավունքներն ու ազատությունները:

## **Կրթություն և գրագիտություն**

### **Բացատրական հուշագիր**

1. Կրթության իրավունքն ամրագրված է ՄԻԵԿ-ի [1-ին արձանագրության 2-րդ հոդվածում](#): Նախարարների կոմիտեի իր անդամ պետություններին ուղղված թիվ [CM/Rec\(2007\)16](#) հանձնարարականը Համացանցի հանրային ծառայության արժեքի խթանման միջոցների վերաբերյալ խրախուսում է ստեղծել, մշակել և մատչելի դարձնել կրթական, մշակութային և գիտական նյութեր թվային ձևաչափով՝ ապահովելու, որ բոլոր մշակույթներն էլ կարողանան արտահայտվել և մուտք ունենալ Համացանցով լեզուներով, այդ թվում՝ բնիկ: Թվային ժառանգության նյութերը, որոնք հանրային տիրույթում են, նույնպես պետք է ազատորեն մատչելի լինեն՝ ողջամիտ սահմանափակումների հաշվառմամբ: Թվային ժառանգության նյութերի մատչելիությունը թույլատրելի է հաստուկ դեպքերում վարձատրելու իրավատերերին իրենց աշխատանքի համար՝ հաշվի առնելով մտավոր սեփականության պաշտպանության ոլորտում թույլատրելի բացառությունները:

2. Համացանցի օգտատերերը պետք է ի վիճակի լինեն ստանալու հիմնական տեղեկատվությունը, կրթությունը, գիտելիքը և հմտությունները՝ Համացանցով իրականացնելու իրենց հիմնական իրավունքներն ու ազատությունները: Սա համահունչ է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի [չափորոշիչներին](#), որոնք խթանում են համակարգչային գրագիտությունը որպես ՏՀՏ-ներով տեղեկատվության մատչելիության, մշակութային իրավունքների և կրթության իրավունքի իրականացման հիմնական նախապայման:

3. Համացանցային գրագիտության ծրագրերը և նախաձեռնությունները հնարավորություն են ընձեռում Համացանցի օգտատերերին քննադատաբար վերլուծելու Համացանցային նյութերի ճշգրտությունն ու արժանահավատությունը: Նախարարների կոմիտեն առաջարկել է որպեսզի Եվրոպայի խորհրդի անդամ

պետությունները մատչելի դարձնեն ՏՀՏ միջոցները և խթանեն կրթությունը՝ հնարավորություն տալու բոլոր անձանց, այդ թվում՝ երեխաներին ձեռք բերելու այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են բազում ՏՀՏ-ների հետ աշխատելու և տեղեկատվության որակին քննադատորեն մոտենալու համար, այդ թվում՝ այնպիսի տեղեկատվության, որը կարող է վնասակար լինել նրանց համար:

Տես [Բացատրական հուշագրի ամբողջական տեքստն այստեղ](#):

## Երեխաները և երիտասարդները

Որպես երեխա կամ երիտասարդ՝ Դուք ունեք սույն Ուղեցույցում ներառված բոլոր իրավունքները և ազատությունները: Մասնավորապես՝ Ձեր տարիքի պատճառով Համացանցից օգտվելիս Դուք ունեք առավել մեծ պաշտպանության և խորհրդատվության իրավունք:

Սա նշանակում է, որ.

Դուք ունեք իրավունք ազատորեն արտահայտելու Ձեր տեսակետներն և մասնակցելու հասարակական կյանքին, լինելու լսված և մասնակցելու Ձեզ վերաբերող որոշումների կայացմանը: Ձեր տեսակետները պետք է պատշաճ ուշադրության արժանանան՝ հաշվի առնելով Ձեր տարիքը և հասունությունը՝ առանց որևէ խտրականության:

Դուք իրավունք ունեք ակնկալելու ստանալ տեղեկություններ Ձեր տարիքին և ուսումնական պատրաստվածության մակարդակին համապատասխան լեզվով Ձեր ուսուցիչներից, դասախոսներից, ծնողներից ու խնամակալներից Համացանցի անվտանգ օգտագործման մասին, այդ թվում՝ այն մասին, թե ինչպես պահպանել Ձեր անձնական կյանքի գաղտնիությունը:

Դուք պետք է իրազեկված լինեք, որ այն նյութերը, որոնք ստեղծում եք Համացանցում կամ Համացանցի այլ օգտատերերի կողմից Ձեր մասին ստեղծվող նյութերը կարող են մատչելի լինել ողջ աշխարհում և, ըստ այդմ, վնաս պատճառել Ձեր արժանապատվությանը, անվտանգությանը և անձնական կյանքի գաղտնիությանը տվյալ պահին կամ ավելի ուշ: Ձեր խնդրանքով դրանք պետք է հնարավոր լինի հեռացնել կամ ջնջել ողջամիտ ժամկետում:

Դուք իրավունք ունեք ակնկալելու ստանալ տեղեկատվություն առցանց այնպիսի նյութերին վարքագծի մասին, որոնք ապօրինի են (օրինակ՝ առցանց հետապնդումների), ինչպես նաև հնարավորություն հաղորդում ներկայացնելու

**Ենթադրաբար ապօրինի նյութերի մասին:** Այս տեղեկությունները պետք է համապատասխանեցվեն Ձեր տարիքին և հանգամանքներին, և Դուք պետք է ստանաք խորհրդատվություն և օժանդակություն՝ Ձեր գաղտնիության և անանունության պատշաճ հաշվառմամբ:

**Դուք պետք է ստանաք հատուկ պաշտպանություն Ձեր ֆիզիկական, հոգեկան և բարոյական բարեկեցության նկատմամբ միջամտությունից, հատկապես՝ Համացանցով սեռական շահագործման և ոտնձգությունների, ինչպես նաև կիրեռհանցագործության այլ տեսակների առնչությամբ:** Մասնավորապես՝ Դուք ունեք կրթության իրավունք՝ պաշտպանվելու նման սպառնալիքներից:

### **Ամփոփելով՝**

Երեխաները և երիտասարդներն իրավունք ունեն ստանալու հատուկ պաշտպանություն և խորհրդատվություն Համացանցից օգտվելու հարցում: Եթե նրանց հրապարակած նյութերը վնաս են պատճառում նրանց արժանապատվությանը, անվտանգության կամ անձնական կյանքի գաղտնիությանը, կամ կարող են վնասել նրանց ապագայում, ապա դրանք, նրանց խնդրանքով պետք է կարճ ժամանակում հեռացվեն: Նրանք պետք է նաև պաշտպանված լինեն իրենց ֆիզիկական, հոգեկան և բարոյական բարեկեցությանը միջամտությունից, մասնավորապես՝ սեռական շահագործումից և ոտնձգություններից:

## **Երեխաները և երիտասարդները**

### **Բացատրական հուշագիր**

1. Երեխաները և երիտասարդներն իրավունք ունեն արտահայտելու իրենց տեսակետները, մասնակցելու հասարակական կյանքին, ինչպես նաև իրենց վերաբերող որոշումների կայացմանը Համացանցի և S2S-ների միջոցով: Սա հիմնված է Նախարարների կոմիտեի [ստանդարտների](#) վրա, որոնք ամրագրում են, որ 18-ից ցածր տարիքի բոլոր երեխաները և երիտասարդները պետք է ունենան իրավունք, միջոցներ, տարածք, հնարավորություն և, անհրաժեշտության դեպքում, օժանդակությունագատորեն արտահայտելու իրենց տեսակետները, լինելու լսված և նպաստելու իրենց վերաբերող հարցերում որոշումների կայացմանը և որ նրանց տեսակետները պետք է պատշաճ ուշադրության արժանանան՝ հաշվի առնելով նրանց տարիքը, հասունությունը և պատկերացումները: Երեխաների և երիտասարդների՝ մասնակցության իրավունքը վերաբերում է նաև համացանցային

միջավայրին՝ առանց խտրականության այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են ռասան, էթնիկ պատկանելությունը, գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, հաշմանդամությունը, ծնունդը, սեռական կողմնորոշումը կամ այլ կարգավիճակ:

2. Երեխաներին և երիտասարդներին պետք է տրամադրվի տեղեկատվություն, որը կհամապատասխանի նրանց տարիքին և հանգամանքներին, այդ թվում՝ սոցիալական ցանցերի և այլ միջոցների օգնությամբ, այն հնարավորությունների մասին, որոնք թույլ են տալիս նրանց իրականացնելու իրենց իրավունքները: Նրանք պետք է լիարժեքորեն տեղեկացված լինեն իրենց մասնակցության ոլորտի մասին, այդ թվում դրա սահմանափակումների, իրենց մասնակցությունից ակնկալելի և իրական արդյունքների և այն մասին, թե ինչպես են իրենց տեսակետներն իրականում ընկալվում: Եթե նրանք համարում են, որ իրենց մասնակցության իրավունքը խախտվել է, նրանց համար պետք է մատչելի լինեն [իրավական պաշտպանության և հատուցման արդյունավետ միջոցներ](#), ինչպիսիք են բողոքարկման, դատական և վարչական՝ երեխաների համար հասկանալի ընթացակարգերը, այդ թվում՝ օժանդակություն և աջակցություն դրանցից օգտվելու հարցում:

3. Երեխաները և երիտասարդ օգտատերերը պետք է կարողանան օգտվել Համացանցից անվտանգության և նրանց անձնական կյանքի գաղտնիության հաշվառման պայմաններում: Նրանք պետք է ուսուցում և տեղեկատվություն ստանան ուսուցիչներից, դասախոսներից և ծնողներից: Տեղեկատվական գրագիտություն ասելով հասկանում ենք տեղեկատվության մատչելիություն ապահովող գործիքների իրազեկ օգտագործում, նյութի քննադատական վերլուծություն և հաղորդակցական հմտությունների յուրացում՝ ամրապնդելու քաղաքացիությունն ու ստեղծարար մոտեցումը, ինչպես նաև վերապատրաստման նախաձեռնությունները երեխաների և նրանց դասախոսների համար՝ [օգտվելու Համացանցից](#) և տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներից դրական և պատասխանատու կերպով:

4. Երեխաների անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը քննության առարկա է դարձել Դատարանում: Երեխաների ֆիզիկական և բարոյական բարեկեցությունը նրանց անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի էական բաղադրիչն է: Անդամ պետություններն ունեն պոզիտիվ պարտավորություններ՝ ապահովելու այս իրավունքի նկատմամբ արդյունավետ հարգանք: Դատարանը համարում է, որ հիմնարար արժեքները և անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի էական ասպեկտները խաթարող ծանր

արարքների արդյունավետ գապումը պահանջում է քրեական իրավունքի արդյունավետ դրույթներ և քննություն:

5. Կարևոր է հասկանալ, որ նյութերը, որ երեխաներն ու երիտասարդները ստեղծում են օգտվելով Համացանցից, կամ այն նյութերը, որ այլ անձինք են ստեղծվում նրանց վերաբերյալ (օրինակ՝ լուսանկարներ, տեսանյութեր, տեքստեր կամ այլ նյութեր) կամ այդ նյութերի հետքերը (գրանցամատյաններ, ձայնագրություններ կամ մշակումներ) կարող են գոյատևել կամ մատչելի լինել ընդմիջտ: Այդ նյութերը կարող են վնաս պատճառել նրանց արժանապատվությանը, անվտանգությանը կամ անձնական կյանքի գաղտնիությանը կամ այլ կերպ խոցելի դարձնել նրանց իրենց կյանքի հետագա փուլերում: Նրանք ինքները, ինչպես նաև նրանց ծնողները, խնամակալները, ուսուցիչները կամ դաստիարակները պետք է ունակ լինեն հասկանալու և հաղթահարելու այս իրականությունը, ինչպես նաև պաշտպանելու իրենց անձնական կյանքի գաղտնիությունն առցանց: Այս նպատակով շատ կարևոր է, որ առկա լինի մասնագիտական խորհրդատվություն այնմասին, թե ինչպես հեռացնել անձնական տեղեկությունները: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն [ուղեցույց է](#) մշակել իր անդամ պետությունների համար՝ ընդգծելով, որ բացի իրավապահ ենթատեքստից չպետք է լինի երեխաների կողմից Համացանցում ստեղծված որևէ նյութի մշտական մատչելիություն, որը խնդրահարույց կլինի նրանց արժանապատվության, անվտանգության և անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի տեսանկյունից կամ խոցելի կդարձնի նրանց այժմ կամ իրենց կյանքի ավելի ուշ փուլերում: Հետևաբար, անդամ պետություններին առաջարկվում է միասին, իսկ երբ դա անհրաժեշտ է, համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, քննարկել նման նյութերի ողջամտորեն կարճ ժամկետում հեռացման կամ ջնջման իրատեսականությունը, այդ թվում՝ դրանց հետքերի (գրանցամատյաններ, ձայնագրություններ և մշակումներ): 3-րդ ենթապարբերությունը, այդուհանդերձ, կիրառելի չէ երեխաներին կամ երիտասարդներին վերաբերող մամուլում կամ հրատարակիչների կողմից ստեղծված նյութերի վերաբերությամբ: Ուղեցույցի այս դրույթի առաջին նախադասությունը հստակեցնում է, որ այն նախատեսված է այնպիսի իրավիճակների համար, որոնք վերաբերում են երեխաների կամ երիտասարդների կողմից կամ նրանց մասին այլ օգտատերերի կողմից ստեղծված նյութերին:

6. Ինչ վերաբերում է առցանց [վնասակար նյութերին](#) և վարքագծին, երեխաներն իրավունք ունեն ստանալու հատուկ խնամք և օժանդակություն՝ իրենց տարիքին և հանգամանքներին համապատասխան, մասնավորապես՝ այնպիսի վնասի ռիսկերից, որոնք կապված են առցանց պոռնոգրաֆիայի, կանանց արժանապատվությունը

նսեմացնող կամ կարծրատիպային ներկայացումից, բռնության կամ ինքնավնասման նկարագրությունից կամ փառաբանումից, հատկապես՝ ինքնասպանություններից, նսեմացուցիչ, խտրական կամ ռասիստական բնույթի արտահայտություններից կամ այդպիսի վարքագծի հանդեպ ներողամտությունից, սեռական ոտնձգություններից, թրաֆիքինգի երեխա զոհերի հավաքումից, հետապնդումների, հետևելու և այլ դրսևորումներից, որոնք ունակ են բացասաբար ազդելու երեխաների ֆիզիկական, հուզական և հոգեբանական բարեկեցության վրա: Համացանցի մանուկ և երիտասարդ օգտատերերը հետևաբար պետք է տեղեկացված լինեն այնպես, որ դա համապատասխանի իրենց տարիքին և այլ հանգամանքներին ասպորինի նյութերի և վարքագծի մասին:

7. Երեխաները և երիտասարդները պետք է նաև կարողանան հաղորդումներ ներկայացնել այնպիսի նյութերի և վարքագծի վերաբերյալ, որոնք վնասի ռիսկ են պարունակում նրանց համար և ստանալու խորհրդատվություն և օժանդակություն իրենց խորհրդապահությունն ու անանունությունն ապահովելու հարցում: Սա հատկապես կարևոր է սոցիալական ցանցերի ենթատեքստում: Նախարարների կոմիտեն [առաջարկել է](#) իր անդամ պետություններին գործողություններ ձեռնարկել այս կապակցությամբ, հատկապես՝ պաշտպանելու երեխաներին և երիտասարդներին վնասական նյութերից հետևյալի միջոցով:

- Հստակ տեղեկատվության տրամադրում այն նյութերի տեսակների, նյութերի տարածման կամ վարքագծի մասին, որը հակասում է կիրառելի օրենսդրության դրույթներին,
- Խմբագրական այնպիսի քաղաքականությունների մշակում, որոնք թույլ կտան համապատասխան նյութը կամ վարքագիծը որակել որպես «ոչ պատշաճ» սոցիալական ցանցից օգտվելու պայմանների և նորմերի մեջ՝ միննույն ժամանակ ապահովելով, որ այս մոտեցումը չսահմանափակի արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքը,
- Սոցիալական ցանցերում տեղադրված անհամապատասխան կամ ակնհայտորեն ասպորինի նյութերի կամ վարքագծի մասին հաղորդում ներկայացնելու մատչելի մեխանիզմների հաստատում,
- Պատշաճ ջանադրությամբ արձագանքում կիրենդետապնդումների կամ կիրենսիրահետումների մասին բողոքներին:

8. Երեխաները և երիտասարդ օգտատերերը պետք է տեղեկացված լինեն իրենց ֆիզիկական և բարոյական բարեկեցությանը արվող միջամտությունների ռիսկերին, այդ թվում՝ սեռական շահագործման և ոտնձգությունների ենթարկվելու ռիսկերին առցանց միջավայրում, որը բերում է հատուկ պաշտպանության անհրաժեշտության:

Այս մասին անդրադարձ կա Եվրոպայի խորհրդի [Լանգարոտի կոնվենցիայում](#), և Դատարանի վերաբերելի պրակտիկայում, որով ճանաչվում է, որ պետությունները պոզիտիվ պարտավորություն են կրում երեխաների առցանց պաշտպանության ապահովման հարցում:

9. [Լանգարոտի կոնվենցիայի](#) համաձայն՝ երեխաները պետք է պաշտպանված լինեն Համացանցով մատչելի և հասանելի պոռնոգրաֆիայի մասնակցության մեջ ներքաշվելուց (օրինակ՝ համացանցային տեսախցիկների միջոցով, գրուցասենյակներում կամ առցանց խաղերում): Նրանք պետք է նաև պաշտպանված լինեն Համացանցի կամ S2S-ների միջոցով արվող առաջարկներից, որոնց նպատակն է նրանց ներքաշել սեռական գործողությունների մեջ. սա վերաբերում է երեխաներին, որոնք ազգային օրենսդրության համաձայն՝ դեռ չեն հասել սեռական հարաբերություններ ունենալու համար նախատեսված տարիքին կամ երեխաների մասնակցությամբ պոռնոգրաֆիկ նյութեր նախապատրաստմանը:

10. Երեխաներին պետք է խրախուսել մասնակցելու պետության այն քաղաքականությունների, ծրագրերի և նախաձեռնությունների մշակմանը և իրականացմանը, որոնք նպատակ ունեն պայքարելու [Համացանցային միջավայրերում երեխաների շահագործման կամ երեխաների ոստնձգությունների դեմ](#): Նրանց պետք է հասու լինեն Համացանցում ենթադրյալ սեռական շահագործման և սեռական ոստնձգությունների մասին հաղորդումներ ներկայացնելու դյուրին և մատչելի միջոցներ և նրանք պետք է կարողանան բողոքներ ներկայացնել հեռախոսային կամ համացանցային թեժ գծերի միջոցով: Նրանց համար պետք է հասու լինի խորհրդատվություն և աջակցություն այս ծառայություններից օգտվելու հարցում՝ նրանց խորհրդապահության և անանունության պատշաճ հաշվառմամբ:

Տես [Բացատրական հուշագրի](#) ամբողջական տեքստն այստեղ:

## Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ

**Դուք ունեք իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք Ձեր իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակումների կամ խախտումների պարագայում:** Իրավական պաշտպանություն ստանալու համար անպայման չէ, որ դուք անմիջապես իրավական գործողություններ ձեռնարկեք: Իրավական պաշտպանության միջոց հայցելու ուղիները պետք է լինեն հասանելի, հայտնի, մատչելի, գնային առումով ողջամիտ և այնպիսին, որ Դուք ստանաք պատշաճ հատուցում: Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ կարելի

է ստանալ անմիջականորեն համացանցային ծառայություններ տրամադրողներից, պետական մարմիններից և/կամ մարդու իրավունքների ներպետական ինստիտուտներից: Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները, կախված խնդրո առարկա խախտումից, պետք է ներառեն հարցումներ, բացատրություններ, պատասխան, ուղղում, ներողություն, վերականգնում, վերամիացում և հատուցում:

Պրակտիկայում դա նշանակում է, որ.

**Ձեր համացանցային ծառայություններ տրամադրողը, առցանց նյութերի և ծառայությունների մատչելիություն ապահովողները կամ այլ ընկերություններ և/կամ պետական մարմիններ պետք է Ձեզ տեղեկացնեն Ձեր իրավունքների, ազատությունների և իրավական պաշտպանության հավանական միջոցների և այն մասին, թե ինչպես ստանալ դրանք: Սա ներառում է հեշտորեն մատչելի տեղեկատվություն այն մասին, թե ինչպես հաղորդումներ և բողոքներ ներկայացնել Ձեր իրավունքներին կատարվող միջամտությունների պարագայում և ինչպես հատուցում հայցել:**

**Լրացուցիչ տեղեկատվությունն խորհրդատվություն պետք է տրամադրեն** պետական մարմինները, մարդու իրավունքների ներպետական ինստիտուտները (ինչպիսիք են օմբուդսմենները), տվյալների պաշտպանության մարմինները, քաղաքացիների խորհրդատվության գրասենյակները, մարդու իրավունքների կամ թվային իրավունքների միավորումները կամ սպառողների կազմակերպությունները:

**Ներպետական մարմինները պարտավոր են պաշտպանել ձեզ Համացանցի միջոցով իրականացվող քրեական գործունեությունից կամ հանցագործություններից,** մասնավորապես, երբ դա վերաբերում է ապօրինի մատչելիությանը, միջամտությանը, կեղծիքի կամ Ձեր թվային ինքնության, համակարգչի կամ համակարգչային տվյալների այլ խարդախ մանիպուլյացիներին: Իրավապահ մարմինները պարտավոր են քննություն իրականացնել և համապատասխան միջոցներ ձեռնարկել, այդ թվում՝ պատժամիջոցներ կիրառել, եթե Դուք բողոքում եք, որ վնաս է պատճառվել կամ միջամտություն է տեղի ունեցել Ձեր ինքնությանը և Ձեր գույքին առցանց:

**Ձեր իրավունքներն ու պարտականությունները կամ Ձեր նկատմամբ մեղադրանքի էությունը որոշելիս Համացանցի առնչությամբ.**

**Դուք ունեք արդար դատաքննության իրավունք** ողջամիտ ժամկետում անկախ և անկողմնակալ դատարանի կողմից:

**Դուք իրավունք ունեք դիմելու Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներպետական բոլոր հասանելի իրավական պաշտպանության միջոցներն սպառելուց հետո:**

### **Ամփոփելով՝**

Օգտատերերն ունեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, երբ նրանց իրավունքները սահմանափակվում կամ խախտվում են: Իրավական պաշտպանության միջոց ձեռք բերելու ուղիները, որոնք անպայման չէ, որ լինեն իրավական գործողությունների տեսքով, պետք է լինեն մատչելի և կապված ողջամիտ ծախսերի հետ: Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները կարող են ստացվել անմիջապես համացանցային ծառայություններ տրամադրողներից, պետական մարմիններից և/կամ մարդու իրավունքների ներպետական ինստիտուտներից: Ներպետական մարմինները պարտավոր են պաշտպանել օգտատերերին քրեական արարքներից, որոնք կատարվում են Համացանցով կամ Համացանցի օգտագործմամբ:

## **Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ**

### **Բացատրական հուշագիր**

1. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքն ամրագրված է [ՄԻԵԿ-ի](#) 13-րդ հոդվածում:
2. ՄԻԵԿ-ի 1-րդ հոդվածը երաշխավորում է ներազգային մակարդակում իրավական պաշտպանության միջոցի առկայություն՝ ՄԻԵԿ-ով նախատեսված իրավունքները և ազատություններն ապահովելու նպատակով ներպետական իրավակարգում գործող ցանկացած ձևով: Այն պահանջում է ներպետական պաշտպանության միջոցի տրամադրում ՄԻԵԿ-ի հոդվածներից որևէ մեկով բերված բողոքի պարագայում և համապատասխան հատուցման նախատեսում: Պետություններն ունեն պոզիտիվ պարտավորություն քննության առնելու մարդու իրավունքների խախտումների մասին պնդումները ջանադիր, մանրակրկիտ և արդյունավետ եղանակով: Համապատասխան ընթացակարգերը պետք է թույլ տան իրավասու մարմիններին որոշելու Կոնվենցիայի խախտման հարցն ըստ էության և նշանակելու պատիժ, սակայն նաև երաշխավորելու ընդունված որոշումների կատարումը:
3. Պետք է լինի ներպետական մարմին, որը լիազորված կլինի ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների խախտումների պնդումների դեպքում որոշում

կայացնել: Պետք է լինի կոնկրետ իրավական ուղի, որով անձը կկարողանա բողոքել իր իրավունքների որոշման հարցով վարույթի անողջամիտ երկարության վերաբերյալ: Անպայման չէ, որ որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմինը լինի դատարանը, եթե առկա են երաշխիքներ այդ մարմնի անկախության և անաչառության վերաբերյալ: Այդուհանդերձ, այդ մարմնի լիազորությունները և ընթացակարգային երաշխիքները պետք է հնարավորություն տան որոշելու, թե արդյոք կոնկրետ իրավական պաշտպանության միջոցն արդյունավետ է:

4. Իրավասու ներպետական մարմնի կողմից պահպանվող ընթացակարգը պետք է հնարավորություն ընձեռի իրականացնելու խախտման արդյունավետ քննություն: Այն պետք է թույլ տա իրավասու մարմնին որոշում կայացնելու ՄԻԵԿ-ի իրավունքի խախտման մասին բողոքի վերաբերյալ ըստ էության, պատժելու այդ խախտման մեղավորներին և երաշխավորելու տուժողին, որ ընդունված որոշումն ի կատար կածվի: Իրավական պաշտպանության միջոցը պետք է գործնականում և օրենքով լինի արդյունավետ և պայմանավորված չլինի բողոքաբերի համար նպաստավոր ելքի որոշակիությամբ: Չնայած առանձին վերցրած և ոչ մի իրավական պաշտպանության միջոց չի կարող լիարժեքորեն բավարարել 13-րդ հոդվածի պահանջները, օրենքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցների հանրագումարը կարող է:

5. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները պետք է լինեն հասանելի, հայտնի, մատչելի, կապված ողջամիտ ծախսերի հետ և ունակ պատշաճորեն վերականգնելու իրավունքը: Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները կարող են նաև ձեռք բերվել ուղղակիորեն համացանցային ծառայություններ տրամադրողներից (չնայած հնարավոր է, որ նրանք չունենան անկախության բավարար մակարդակ՝ համապատասխանելու ՄԻԵԿ-ի 13-րդ հոդվածի պահանջները), պետական մարմիններից/կամ մարդու իրավունքների ներպետական ինստիտուտներից: Իրավական պաշտպանության միջոցները ներառում են հարցումները, ծառայություն տրամադրողի կամ առցանց տրամադրողի բացատրությունները, գրպարտչական կամ վիրավորական հայտարարությանը պատասխանելու հնարավորությունը, համացանցային ծառայության տրամադրողի կողմից հեռացված՝ օգտատիրոջ կողմից ստեղծված նյութի վերատեղադրումը և Համացանցին վերստին միացումն այն դեպքում, երբ Համացանցի օգտատերերին անջատել են Համացանցից, և համապատասխան փոխհատուցումը:

6. Պետությունները, մասնավոր ընկերությունների կողմից կատարվող իրավունքների խախտումներից անձանց պաշտպանելու՝ իրենց պոզիտիվ պարտավորությունների շրջանակներում պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն՝ ապահովելու, որ

նման խախտումների պարագայում տուժողների համար հասանելի լինեն դատական և արտադատական մեխանիզմները: **Բիզնեսի և մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի ուղենիշային սկզբունքները** սահմանում են, որ ընկերությունները պետք է ունենան բողոքարկման մեխանիզմներ, որոնք անձանց համար կլինեն ուղղակիորեն մատչելի, կանխատեսելի (նախատեսելով հստակ և հայտնի ընթացակարգեր գործընթացի յուրաքանչյուր փուլի համար ժամկետների մատնանշմամբ, հստակություն ընթացակարգերի տեսակների, հասանելի արդյունքների և դրանց իրականացման մշտադիտարկման մեթոդների վերաբերյալ) արդարացի (տեղեկատվության ռեսուրսների, խորհրդատվության և մասնագիտական կարծիքի մատչելիություն), թափանցիկ և ունակ առաջարկելու իրավական պաշտպանության այնպիսի միջոցներ, որոնք լիովին կհամապատասխանեն մարդու իրավունքների չափորոշիչներին:

7. Համացանցի օգտատերերին պետք է առաջարկվի հստակ և թափանցիկ տեղեկատվություն իրենց համար հասանելի իրավական պաշտպանության միջոցների մասին: Այս տեղեկատվությունը կարող է ներառվել օգտագործման և/կամ ծառայության պայմանների մեջ կամ համացանցային ծառայության/առցանց տրամադրողի այլ ուղենիշներում կամ քաղաքականություններում: Համացանցի օգտատերերին պետք է տրամադրվել գործնական և մատչելի գործիքներ համացանցային ծառայության/առցանց տրամադրողի հետ իրենց մտահոգությունները հաղորդելու նպատակով: Նրանք պետք է կարողանան հայցել տեղեկատվություն և իրենց իրավունքների վերականգնում: Համացանցի օգտատերերի համար հասանելի իրավական պաշտպանության միջոցների թվին են պատկանում օգնության և թեժ գծերը՝ բացված համացանցային ծառայությունների տրամադրողների կամ սպառողների պաշտպանության միավորումների կողմից, որոնց կարող են դիմել Համացանցի օգտատերերը, եթե նրանց կամ այլոց իրավունքները խախտվեն: Պետական մարմինները և/կամ մարդու իրավունքների ազգային հաստատությունները (օմբուդսմենները), տվյալների պաշտպանության մարմինները, էլեկտրոնային հաղորդակցությունների կարգավորողները, քաղաքացիների խորհրդատվության գրասենյակները, մարդու իրավունքների կամ թվային իրավունքների միավորումները կամ սպառողների կազմակերպությունները պետք է խորհրդատվություն տրամադրեն:

8. Համացանցի օգտատերերը պետք է պաշտպանված լինեն կիրեռահանցագործություններից: Այն պետությունները, որոնք ստորագրել են **Բուդապեշտի կոնվենցիան**, դրանով պարտավորվել են պաշտպանել քաղաքացիներին Համացանցով իրականացվող քրեական բնույթի գործունեությունից

և հանցագործություններին: Համացանցի օգտատերերն ունեն ողջամիտ ակնկալիք, որ իրենք պաշտպանված են Համացանցով կամ Համացանցի օգնությամբ իրականացվող քրեական գործունեությունից կամ հանցագործություններից:

9. Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում համակարգչային տվյալների և համակարգերի խորհրդապահության և ամբողջականության դեմ կատարվող հանցագործություններին և կիրեռհանցագործություններին: Նյութերին առնչվող հանցագործություններին (մանկական պոռնոգրաֆիա, հեղինակային իրավունքի խախտումներ) սա չի վերաբերում, քանի որ դրանց նմակտամամբ կիրառելի է Ուղեցույցի՝ երեխայի իրավունքներին վերաբերող մասերը: Իրավատերերի պաշտպանությունը ենթադրաբար ներառում է այս հատուկ խմբի շահերը, այլ ոչ՝ Համացանցի օգտատերերինը: Բացի դրանից, հաղորդակցությունների գաղտնի առգրավմանն ու գաղտալսումներին անդրադարձ կա անձնական կյանքի գաղտնիության և տվյալների պաշտպանության մասին բաժնում:

10. Համացանցի օգտատերերն ունեն իրավաչափ նպատակ կառավարելու, գործարկելու և վերահսկելու իրենց համակարգչային համակարգերը անարգել և անխոչընդոտ եղանակով: Նրանք պետք է պաշտպանված լինեն ամբողջական համակարգչային համակարգերի կամ դրանց առանձին մասերի ապօրինի մատչելիությունից, այդ թվում՝ գործիքակազմի, մասերի, համակարգում պահպանվող տվյալների, ֆայլերի քարտացուցակի, տեղեկությունների հոսքի և նյութերին վերաբերող տվյալների: Սա նաև ներառում է պաշտպանություն համակարգչային համակարգեր և տվյալներ առանց թույլտվության ներխուժումներից (հաքերություն, քրեքերություն կամ համակարգչային ոտնձգությունների այլ ձևեր), որոնք կարող են հանգեցնել համակարգերի և տվյալների օգտատերերի առջև խոչընդոտների, այդ թվում՝ գաղտնի տվյալների (գաղտնաբառեր, տեղեկություններ և գաղտնիքներ) մատչելիության:

11. Համացանցի օգտատերերը պետք է նաև պաշտպանված լինեն համակարգչային տվյալներին միջամտությունից, ինչպիսիք են, օրինակ, վնասակար կոդերը (վիրուսներ և Տրոյական ձիեր): Նրանք պետք է նաև պաշտպանված լինեն համակարգիչների կամ հեռահաղորդակցության համակարգերի գործունեության խափանումներից համակարգչային տվյալների մուտքագրման, փոխանցման, վնասման, հեռացման, փոփոխման կամ արգելման միջոցով, ինչպիսիք են, օրինակ, այն ծրագրերը, որոնք առաջացնում են «ճառայությունների մերժում» հարձակումներ, վնասակար կոդեր, ինչպիսիք են վիրուսները, որոնք կանխարգելում են կամ էականորեն դանդաղեցնում համակարգի գործունեությունը կամ ծրագրեր, որոնք

ուղարկում են մեծաքանակ էլ. փոստ՝ խափանելու համակարգի հաղորդակցության գործառույթները: Մա կարող է լինել վարչական կամ քրեական իրավախախտում՝ կախված ներպետական օրենսդրությունից:

12. Համացանցի օգտատերերը պետք է պաշտպանված լինեն համակարգչային կեղծիքներից, որոնք ներառում են տվյալների չլիազորցած ստեղծում կամ փոփոխում՝ փոփոխելու դրանց ապացուցողական արժեքն իրավական գործողությունների ժամանակ, որոնք ապավինում են տվյալներում պարունակվող տեղեկությունների իսկության վրա:

13. Համացանցի օգտատերերն ունեն իրավաչափ շահ համակարգչային համակարգերում ներկայացված կամ վարվող գույքի պաշտպանության հարցում (էլեկտրոնային ֆինանսներ, որպես ավանդ ներդրված գումերներ): Նրանք պետք է պաշտպանված լինեն համակարգչային խարդախությունից, որի արդյունքում տեղի է ունենում Համացանցի օգտատիրոջ գույքի ուղղակի տնտեսական կամ տիրապետման կորուստ (գումարի շարժական կամ անշարժ գույքի, որն ունի տնտեսական արժեք), այդ թվում՝ վարկային քարտերի խարդախություն:

14. Համացանցի օգտատերերին կիբեռհանցագործություններից պաշտպանելու նպատակ հետապնդող որևէ անվտանգության միջոց պետք է լիովին համապատասխանի ՄԻԵԿ-ի չափորոշիչներին, հատկապես՝ անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի և արտահայտվելու ազատության իրավունքներին:

15. Համացանցի օգտատերերն ունեն արդար դատաքննության իրավունք, որն ամրագրված է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով: Մա վերաբերում է Համացանցի օգտատերերի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կամ նրանց գործունեության առնչությամբ քրեական մեղադրանքի որոշման հարցին: Մասնավորապես՝ խոսքը գնում է Դատարանի կողմից սահմանված կարևորագույն սկզբունքների մասին, մասնավորապես՝ արդար և հրապարակային դատաքննության իրավունքի ողջամիտ ժամկետում անկախ և անկողմնակալ դատարանի կողմից, դատարաններում հայցեր հարուցելու իրավունքի, վեճի վերջնական լուծման իրավունքի, պատճառաբանված դատական ակտի, և այդ դատական ակտի կատարման և մրցակցային դատավարության ու զենքերի հավասարության իրավունքի և այլն:

16. Դատարանը, չնայած, Համացանցին չվերաբերող գործերում, սահմանել է ընդհանուր սկզբունքներ արդարադատության իրականացման որակի

(անկախություն, անկողմնակալություն, իրավասու դատարան), կողմերի իրավունքների պաշտպանության (արդար դատաքննություն, զենքերի հավասարություն և հրապարակային դատաքննություն), ինչպես նաև արդարադրության իրականացման արդյունավետության (ողջամիտ ժամկետ) վերաբերյալ:

17. Համացանցի օգտատերն իրավունք ունի անհատական գանգատ ներկայացնելու Դատարան ներպետական իրավական պաշտպանության՝ իրեն հասու և արդյունավետ բոլոր միջոցներն սպառելուց հետո իր գործով վերջնական որոշման ստացումից սկսած վեց ամսվա ընթացքում:

Տես [Բացատրական հուշագրի](#) ամբողջական տեքստն այստեղ:

## Մարդու իրավունքները Համացանցում

### կառավարությունների համար

**Համացանցը կարևոր դեր է խաղում մարդկանց ամենօրյա կյանքում և մարդկային հասարակության բոլոր ոլորտներում:** Այն շարունակաբար կատարելագործվում է և քաղաքացիներին հնարավորություն ընձեռում հասու լինել տեղեկատվությանն ու օգտվել բազում ծառայություններից, միանալ և հաղորդակցվել, ինչպես նաև փոխանակել գաղափարներ և գիտելիքներ համաշխարհային մակարդակում:

**Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Համացանցին վերաբերող գործերի թիվը գնալով աճում է:** Դատարանը հաստատել է, որ «Համացանցն այժմ դարձել է այն գլխավոր միջոցներից մեկը, որի շնորհիվ անձինք իրականացնում են արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրենց իրավունքը՝ տրամադրելով էական գործիքներ այնպիսի միջոցառումների և քննարկումների համար, որոնք վերաբերում են քաղաքական և հանրային շահին վերաբերող հարցերի»:

**Եվրոպայի խորհրդի Համացանցի կառավարման 2012-2015թթ. ռազմավարությունը մեծ նշանակություն է տալիս Համացանցի օգտատերերի իրավունքներին:** Դրա «Առավելագույն իրավունքներ և ազատություններ Համացանցի օգտատերերի համար» գլուխը, որը նպատակ է հետապնդում խթանելու Համացանցի մատչելիությունն ու լավագույն կիրառությունը, որպես գործողություն նախատեսում է. «կազմել տեղեկատու Համացանցի օգտատերերի համար գոյություն ունեցող մարդու

իրավունքների վերաբերյալ՝ օգնելու նրանց Համացանցի հիմնական դերակատարների և կառավարական մարմինների հետ հաղորդակցվելու և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ հայցելու հարցում այն ժամանակ, երբ նրանք կգտնեն, որ իրենց իրավունքներն ու ազատությունները խախտվել են. հաղորդում կամ բողոք ներկայացնել միջադեպի վերաբերյալ, կամ հայցել պատասխանի իրավունք, հատուցում կամ իրավական պաշտպանության այլ միջոց»:

## Մարդու իրավունքների զարգացում Համացանցի օգտատերերի համար

Մեդիաների և տեղեկատվական հասարակության հարցերի գլխադասային հանձնաժողովը (CDMSI) առաջարկել է Նախարարների կոմիտեին ստեղծել Համացանցի օգտատերերի իրավունքների հարցերով Փորձագետների կոմիտե (MSI-DUI) 2012թ. ապրիլից հետո: Համացանցի օգտատերերի իրավունքների հարցերի կոմիտեն՝ կազմված Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և քաղաքացիական հասարակության և գիտական շրջանակների ներկայացուցիչներ հանդիսացող անկախ փորձագետներից, աշխատել է մոտ երկու տարի:

Համացանցում մարդու իրավունքների ոլորտի՝ իրենց լիազորություններն իրականացնելիս փորձագետները խորհրդակցություններ են անցկացրել շահագրգիռ կողմերի հետ EuroDIG Համացանցի կառավարման եվրոպական երկխոսության (20-21-ը հունիսի, 2013թ., Լիսաբոն, Պորտուգալիա) և IGF Համացանցի կառավարման ֆորումի (22-25-ը հոկտեմբերի, 2013, Բալի, Ինդոնեզիա) շրջանակներում: Նրանք նաև կազմակերպել են բաց քննարկումներ Համացանցի օգտատերերի իրավունքների վերաբերյալ 2013թ. հոկտեմբերին, որոնց մասնակցել են մասնավոր հատվածի (հեռահաղորդակցության ընկերություններ, առցանց ծառայություններ տրամադրողներ), քաղաքացիական հասարակության առանցքային ներկայացուցիչներ, տեխնոլոգիական համայնքի ներկայացուցիչներ, ինչպես նաև տարբեր պետություններից եկած գիտնականներ:

2014թ. հունվարին CDMSI հաստատեց Մարդու իրավունքներ Համացանցի օգտատերերի համար ուղեցույցի նախագիծը, որը մշակվել էր փորձագետների կողմից, որն աչքի էր ընկնում իր պարզ և հանրամատչելի մոտեցմամբ, ինչպես նաև Նախարարների կոմիտեի՝ իր անդամ պետություններին ուղղված հանձնարարականը:

2014թ. ապրիլի 16-ին Նախարարների կոմիտեն ընդունեց [Հանձնարարականը](#), որի հավելվածն էր Մարդու իրավունքներ Համացանցի օգտատերերի համար ուղեցույցը:

Մարդու իրավունքներ համացանցի օգտատերերի համար ուղեցույցը չի ստեղծում նոր իրավունքներ. այն պարզապես բացատրում է արդեն իսկ գոյություն ունեցող իրավունքները և օգտատերերին ներկայացնում է Համացանցին վերաբերելի հիմնարար իրավունքները: Այն հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի վրա:

## Կարևոր

Նախարարների կոմիտեի՝ իր անդամ պետություններին ուղղված թիվ CM/Rec(2014)6 հանձնարարականը Մարդու իրավունքների ուղեցույց Համացանցի օգտատերերի համար նպատակ ունի ամրապնդելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումն ու պաշտպանությունը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում: Համացանցի մատչելիությունն առանձին անհատների և համայնքների համար և դրա լավագույնս օգտագործումը առաջացնում են նրանց տեղեկացնելու և հզորացնելու անհրաժեշտություն, որպեսզի նրանք կարողանան իրականացնել իրենց իրավունքներն ու ազատությունները առցանց միջավայրերում: Այս մոտեցումը վերահաստատվել է Նախարարների կոմիտեի կողմից իր [Համացանցի կառավարման սկզբունքների մասին հռչակագրում](#), 2011թ., որում Կոմիտեն ընդգծել է իր տեսլականը մարդակենտրոն և մարդու իրավունքների վրա հիմնված Համացանց ունենալու անհրաժեշտության մասին, որը հնարավորություն կտա Համացանցի օգտատերերին իրականացնելու իրենց իրավունքներն ու ազատությունները Համացանցում՝ որպես Համացանցի կառավարման սկզբունք:

Ուղեցույցը, որը հավելվածի տեսքով կցված է Հանձնարարականին, առաջարկում է բազային տեղեկություններ [Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի](#) և Եվրոպայի խորհրդի այլ վերաբերելի փաստաթղթերում ներառված որոշ իրավունքների մասին: Այն [կենտրոնանում է](#) որոշ իրավունքների և ազատությունների, ինչպես նաև վերաբերելի միջազգային իրավունքի չափորոշիչների վրա, մասնավորապես՝ [արտահայտվելու ազատության, հավաքների և միավորումների ազատության, անձնական կյանքի նկատմամբ հարգանքի և անհատական տվյալների պաշտպանության իրավունքի, երեխայի իրավունքների և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի](#): Այն մշակված է մի

լեզվով, որը դյուրըմբռնելի է օգտատերերի համար: Տեքստը հնարավորինս պարզեցնելու նպատակով **Համացանցի օգտատերերի իրավունքների հարցերի փորձագետների կոմիտեն** որոշել է չօգտագործել միջազգային իրավունքով անդամ պետությունների պարտավորությունների, այդ թվում՝ Դատարանի պրակտիկայի չոր իրավական ձևակերպումները:

**Մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները երաշխավորված են Եվրոպայի խորհրդի բազում փաստաթղթերում, որոնք կիրառելի են ինչպես Համացանցում, այնպես էլ՝ Համացանցից դուրս և ուրեմն՝ ոչ բացառապես Համացանցի պարագայում:** Մասնավորապես՝ մարդու իրավունքներն ու հիմնարար ազատություններն ամրագրված են ՄԻԵԿ-ում, որի մեկնաբանությունները տալիս է Դատարանն իր պրակտիկայում: Եվրոպայի խորհրդի մի շարք կոնվենցիաներ և այլ ոչ պարտադիր փաստաթղթեր լրացուցիչ բացատրություններ և կողմնորոշում են ապահովում Համացանցի օգտատերերին: Համացանցի օգտատերերի իրավունքների հարցերի փորձագետների կոմիտեն համարում է, որպեսզի Համացանցի օգտատերերն ավելի լավ պատկերացնեն իրենց իրավունքներն ու պարտականությունները, անհրաժեշտ է շատ պարզ նրանց բացատրել Եվրոպայի խորհրդի և Միավորված ազգերի միջազգային իրավունքի վերաբերելի չափորոշիչները:

## Քաղաքականության պարտավորություն

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պարտավոր են ապահովել իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի իրավունքներն ու հիմնարար ազատությունները՝ **Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում** (ETS No. 5, Կոնվենցիա) համապատասխան: Այս պարտավորությունը գործում է նաև Համացանցի կիրառության պարագայում: Եվրոպայի խորհրդի այլ կոնվենցիաներն ու փաստաթղթերը, որոնք վերաբերում են արտահայտվելու ազատության իրավունքին, տեղեկատվության մատչելիության, հավաքների ազատության իրավունքի պաշտպանությանը, կիրեռհանցագործություններից պաշտպանությանը, անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին և անհատական տվյալների պաշտպանության իրավունքին, ևս կիրառելի են:

**Պետությունների՝ մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և խթանելու պարտավորությունը ներառում է նաև վերահսկողություն մասնավոր ընկերությունների նկատմամբ:** Մարդու իրավունքները, լինելով համընդհանուր և

անքակտելի, ինչպես և դրանց վերաբերող չափորոշիչները գերակա են որևէ պայմանի և նորմի նկատմամբ, որոնք մասնավոր հատվածի դերակատարներն են պարտադրում Համացանցի օգտատերերին:

**Համացանցն ունի հանրային ծառայության արժեք:** Մարդիկ, համայնքները, պետական մարմիններն ու մասնավոր ընկերությունները ապավինում են Համացանցին իրենց գործունեության մեջ և ունեն իրավաչափ ակնկալիք, որ համացանցային ծառայությունները մատչելի են, տրամադրվում են առանց խտրականության, գնային առումով ողջամիտ են, անվտանգ, հուսալի և շարունակական: Ավելին, որևէ մեկը Համացանցից օգտվելիս չպետք է ենթարկվի ոչ իրավաչափ, ոչ անհրաժեշտ և անհամաչափ միջամտության իր իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացման ժամանակ:

**Օգտատերերը պետք է օժանդակություն ստանան հասկանալու և արդյունավետորեն իրականացնելու իրենց առցանց իրավունքներն ու ազատությունները, երբ դրանք սահմանափակվում են կամ տեղի է ունենում այլ միջամտություն:** Այս օժանդակությունը պետք է ներառի նաև խորհրդատվություն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների մատչելիության վերաբերյալ: Հանրային գործերի թափանցիկության և հաշվետվողական վարման առումով Համացանցի ընձեռած հնարավորությունների լույսի ներքո օգտատերերը պետք է իրավունք ունենան օգտվելու Համացանցից ժողովրդավարական կյանքին մասնակցելու նպատակով:

Տես [Հանձնարարականի](#) ամբողջական տեքստն այստեղ:

### **Ամփոփելով՝**

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պարտավոր են իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայով նախատեսված իրավունքներն ու հիմնարար ազատությունները: Մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և խթանելու՝ պետությունների պարտավորությունները ներառում են նաև վերահսկողություն մասնավոր ընկերությունների նկատմամբ: Համացանցն ունի հանրային ծառայության արժեք: Օգտատերերը պետք է օժանդակություն ստանան հասկանալու և արդյունավետորեն իրականացնելու իրենց իրավունքներն ու ազատությունները, երբ դրանք սահմանափակվում են կամ տեղի է ունենում այլ միջամտություն դրանց նկատմամբ:

# Քաղաքականության պարտավորություն

## Բացատրական հուշագիր

1. Պրեամբուլան ներկայացնում է պատճառները, որոնց բերումով Նախարարների կոմիտեն ընդունել է իր անդամ պետություններին ուղղված հանձնարարականը: Հանձնարարականի նախադրյալն այն է, որ մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները երաշխավորելու պարտականությունը կրում են Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, և նրանք դա պետք է անեն Դատարանի՝ ՄԻԵԿ-ին տված մեկնաբանություններին համահունչ: Եվրոպայի խորհրդի այլ պարտադիր բնույթ ունեցող իրավական փաստաթղթերը, այդ թվում՝ Կիրեռհանցագործությունների մասին կոնվենցիան (այսուհետ՝ Բուդապեշտի կոնվենցիա), Սեռական շահագործումից և սեռական ոտնձգություններից երեխաներին պաշտպանելու մասին կոնվենցիան (CETS No. 201, այսուհետ՝ Լանգարտտի կոնվենցիա), և Անհատական տվյալների ավտոմատ մշակումից անձանց պաշտպանելու մասին կոնվենցիան (ETS No.108, այսուհետ՝ Կոնվենցիա թիվ 108) ևս կարևոր են:

2. Նախարարների կողմից ընդունված ոչ պարտադիր չափորոշիչները ևս ուղենիշներ են պարունակում անդամ պետությունների համար Համացանցին վերաբերող հարցերում, այդ թվում՝ Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված թիվ [CM/Rec\(2007\)16](#) հանձնարարականը Համացանցի հանրային ծառայության արժեքի խթանման միջոցառումների վերաբերյալ, Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված թիվ [CM/Rec\(2008\)6](#) հանձնարարականը Համացանցային գոտիների առնչությամբ արտահայտվելու և տեղեկատվության ազատության նկատմամբ հարգանք խթանելու միջոցառումների վերաբերյալ, Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված թիվ [CM/Rec\(2010\)13](#) հանձնարարականը նկարագրերի հավաքման համատեքստում անհատական տվյալների ավտոմատ մշակման առնչությամբ անձանց պաշտպանության վերաբերյալ, Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված թիվ [CM/Rec\(2011\)7](#) հանձնարարականը մեդիաների նոր հասկացության վերաբերյալ, Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված թիվ [CM/Rec\(2012\)4](#) հանձնարարականը սոցիալական ցանցերի ծառայությունների առնչությամբ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ, և Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված թիվ [CM/Rec\(2012\)3](#)

հանձնարարականը որոնման համակարգերի առնչությամբ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ:

3. Պրեամբուլայի երկրորդ պարբերությունը սահմանում է, որ մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և խթանելու՝ պետությունների պարտավորությունները ենթադրում են մասնավոր ընկերությունների վերահսկողություն: Այս դրույթը բխում է ՄԻԵԿ-ի 1-ին հոդվածից, որի համաձայն՝ պետություններն ապահովում են իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքներն ու ազատությունները: Սա ներառում է նաև պաշտպանությունն ոչ պետական դերակատարների կողմից մարդու իրավունքների խախտումներից և պահանջում է, որպեսզի պետությունները քայլեր ձեռնարկեն կանխելու, քննելու, պատժելու և իրավական պաշտպանության միջոց ապահովելու այդ խախտումների պարագայում արդյունավետ օրենսդրական և այլ միջոցներով: Դատարանն իր վճիռներով վերահաստատել է, որ պետություններն ունեն պոզիտիվ պարտավորություն Համացանցում պաշտպանելու անձանց հիմնարար իրավունքներն ու ազատությունները, մասնավորապես՝ արտահայտվելու ազատությունը, երեխաների և երիտասարդների պաշտպանությունը, բարոյականության և այլոց իրավունքների պաշտպանությունը, պայքարը ռասիզմի կամ մարդատյացության, ինչպես նաև խտրականության և ռասայական ատելության դեմ:

Ի լրումն սրա՝ Դատարանը որոշել է, որ Պետությունները պատասխանատու են, եթե չեն կարողանում պաշտպանել իրենց քաղաքացիներին իրավունքների և ազատությունների վրա այն բացասական հետևանքներից, որոնք ծագում են մասնավոր ընկերությունների գործողություններից: Երկրորդ պարբերությունը ևս անդրադառնում է մարդու իրավունքների համընդհանուր և անքակտելի լինելուն՝ հիմնված Վիեննայի հռչակագրի վրա, որն ընդունվել էր Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարների 1993թ. հոկտեմբերի 9-ի գագաթնաժողովում:

4. Պրեամբուլայի երրորդ պարբերությունը վերահաստատում է Համացանցի հանրային ծառայության արժեքը՝ համաձայն Նախարարների կոմիտեի թիվ [CM/Rec\(2007\)16](#) հանձնարարականի: Հաշվի առնելով այն կարևոր դերը, որ Համացանցն է խաղում օգտատերերի ամենօրյա կյանքում, ինչպես նաև Համացանցում նրանք իրավունքների պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունը՝ Հանձնարարականն ընդգծում է, որ մարդիկ չպետք է

ենթարկվեն ոչ իրավաչափ, ոչ անհրաժեշտ և անհամաչափ միջամտության իրենց իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս:

5. Պրեամբուլայի չորրորդ պարբերությունը սահմանում է Հանձնարարականի նպատակը, այն է՝ ամրապնդել և խթանել օգտատերերի ընկալումն իրենց առցանց իրավունքների, այդ թվում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրականացման վերաբերյալ: Օգտատերերին իրենց հիմնարար իրավունքների և ազատությունների հետ կապված ռիսկերի և իրավական պաշտպանության ուղիների մասին տեղեկացնելը շատ կարևոր է: Հանրային գործերը թափանցիկ և հաշվետու կերպով վարելու առումով Համացանցի ընձեռած հնարավորությունների մասին դրույթը բացատրում է Հանձնարարականի նպատակներից մեկը, այն է՝ անհատներին և համայնքներին իրավունք վերապահել ժողովրդավարական կյանքին մասնակցելու համար:

Տես [Բացատրական հուշագրի](#) ամբողջական տեքստն այստեղ:

## Առաջարկվող գործողությունները

Արդեն իսկ գոյություն ունեցող իրավունքների ու պարտականությունների Համացանցում Համացանցից դուրս հավասարապես կիրառելիությունն ապահովելու նպատակով Նախարարների կոմիտեն առաջարկում է.

**Գործողություն 1** – Ակտիվորեն խթանել Համացանցի օգտատերերի իրավունքների մասին ուղեցույցի տարածումը (տես հավելվածը) քաղաքացիների, պետական մարմինների և մասնավոր հատվածի շրջանում և ձեռնարկել կոնկրետ միջոցառումներ դրա կիրառության ոլորտում, ինչը հնարավորություն կտա օգտատերերին լիարժեքորեն իրականացնելու իրենց իրավունքներն ու հիմնարար ազատությունները Համացանցում:

**Գործողություն 2** – Գնահատել, պարբերաբար վերանայել և անհրաժեշտության դեպքում վերացնել Համացանցում մարդու իրավունքների և ազատությունների իրականացման նկատմամբ կիրառվող սահմանափակումները, հատկապես՝ երբ դրանք համահունչ չեն Կոնվենցիային՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան պրակտիկայի լույսի ներքո: Որևէ սահմանափակում պետք է նախատեսված լինի օրենքով, հետապնդի իրավաչափ նպատակ և լինի համաչափ հետապնդած իրավաչափ նպատակին:

**Գործողություն 3 – Ապահովել, որ Համացանցի օգտատերերին մատչելի լինեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, երբ նրանց իրավունքներն ու ազատությունները սահմանափակվում են կամ երբ նրանց կարծիքով նրանց իրավունքները խախտվում են:** Սրա համար պահանջվում է ավելի լավ համակարգում և համագործակցություն համապատասխան ինստիտուտների, մարմինների և համայնքների միջև: Անհրաժեշտություն է նաև առաջանում ներգրավել և արդյունավետորեն համագործակցել մասնավոր հատվածի դերակատարների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ: Կախված ազգային համատեքստից՝ սա կարող է ներառել նաև այնպիսի պաշտպանության մեխանիզմների նախատեսում, ինչպիսիք են, օրինակ, տվյալների պաշտպանության մարմինների, մարդու իրավունքների ազգային ինստիտուտների (օրինակ օմբուդսմանների), դատական ընթացակարգերը և թեժ գծերը:

**Գործողություն 4 – Խթանել համակարգումն այլ պետական և ոչ պետական դերակատարների հետ Եվրոպայի խորհրդի ներսում և ԵՄ-ից դուրս այն չափորոշիչների և ընթացակարգերի առնչությամբ, որոնք ազդում են Համացանցում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վրա:**

**Գործողություն 5 – Խրախուսել մասնավոր հատվածի դերակատարներին մասնակցելու իրական երկխոսությանը համապատասխան պետական մարմինների և քաղաքացիական հասարակության միջև իրենց կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում, այդ թվում՝ նրանց թափանցիկության և հաշվետվողականության՝ համաձայն Բիզնեսի և մարդու իրավունքների ոլորտի ուղենիշային սկզբունքները՝ իրականացնելով Միավորված ազգերի «Պաշտպանեք, հարգեք և վերականգնեք» ծրագիրը: Մասնավոր հատվածին պետք է նաև խրախուսել նպաստելու սույն ուղեցույցի տարածմանը:**

**Գործողություն 6 – Խրախուսել քաղաքացիական հասարակությանը նպաստելու ուղեցույցի տարածմանն ու կիրառմանը, որպեսզի այն արդյունավետ գործիք դառնա Համացանցի օգտատերերի համար:**

Տես [Հանձնարարականի](#) ամբողջական տեքստն այստեղ:

### **Ամփոփելով՝**

Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին առաջարկվում է ակտիվորեն խթանել Համացանցի օգտատերերի համար մարդու իրավունքների ուղեցույցը, գնահատել, վերանայել, վերացնել Համացանցում իրավունքների իրականացման հարցում առկա սահմանափակումները, ապահովել, որ Համացանցի օգտատերերին մատչելի լինեն

իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, երբ նրանց իրավունքները ոտնահարվում են, խթանել համակարգումը պետական և ոչ պետական գործող անձանց հետ, խրախուսել մասնավոր հատվածին՝ մասնակցելու բազմակողմ երկխոսության իրենց կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում, խրախուսել քաղաքացիական հասարակությանը սույն ուղեցույցի տարածման և կիրառության հարցում:

## Առաջարկվող գործողությունները

### Բացատրական հուշագիր

Սույնով ամրագրվում է Եվրոպայի խորհրդի՝ Համացանցին առնչվող [չափորոշիչների](#) առաջնաբային սկզբունքը, այն է՝ հիմնարար իրավունքներն ու ազատությունները կիրառելի են հավասարապես առցանց և ցանցից դուրս միջավայրերում: Այս մոտեցումն է նաև հաստատել Միավորված ազգերի Մարդու իրավունքների խորհուրդը իր 2012թ. Բանաձևում «Համացանցում Մարդու իրավունքների խթանման, պաշտպանության և իրականացման» վերաբերյալ: Ուղեցույցի կիրառության խթանումը էլ ավելի կամրապնդի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը՝ մարդու իրավունքների գործող չափորոշիչներին համապատասխան:

**Գործողություն 1-ով** անդամ պետություններին առաջարկվում է խթանել Ուղեցույցը ոչ միայն պետական մարմինների, այլև՝ մասնավոր հատվածի միջոցով: Մա կարող է ներառել դրա հրապարակումն ու տարածումը տպագիր տարբերակով կամ ադապտացումն էլեկտրոնային ձևաչափով: Համապատասխան պետական մարմինները կարող են նաև տեղադրել այն իրենց կայքերում: Մասնավոր հատվածին պետք է խրախուսել անելու նույնը:

**Գործողություն 2-ը** վերահաստատում է, որ Համացանցում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումը կարող է ենթարկվել սահմանափակումների, որոնք հետապնդում են իրավաչափ նպատակներ և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ համաձայն ՄԻԵԿ-ի համապատասխան հոդվածների: Հիշյալ պայմանների պահպանում ապահովելու նպատակով Նախարարների կոմիտեն առաջարկել է իր անդամ պետություններին գնահատել, պարբերաբար վերանայել և, անհրաժեշտության դեպքում, վերացնել

Համացանցում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակումները:

**Գործողություն 3-ը** կոչ է անում անդամ պետություններին մեծացնելու իրենց ջանքերը իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի երաշխավորման ոլորտում, ի թիվս այլոց, ապահովելով խորացված համակարգում և համագործակցություն համապատասխան ինստիտուտների, մարմինների (այդ թվում՝ էլեկտրոնային հաղորդագրությունների կարգավորողների) և համայնքների միջև, որոնք կառաջարկեն իրավունքների վերականգնման մեխանիզմներ, ինչպիսիք են Համացանցի օգտատերերի կողմից ներկայացվող բողոքներին ընթացք տալը: Հանձնարարականը նաև ճանաչում է, որ տարբեր պետություններում գործող իրավունքների վերականգնման մեխանիզմները տարբեր են՝ դրանցում ներառելով տվյալների պաշտպանության մարմիններին, օմբուդսմեններին, դատական ընթացակարգերը և թե՛ գծերը: Անդամ պետությունները կարող են նաև վերանայել իրավունքների վերականգնման գործող մեխանիզմները և հավաքել վերաբերելի տեղեկությունները օգտատերերի կիրառության տեսանկյունից հանրամատչելի տեսքով: Նման տեղեկությունները կարելի է տարածել Ուղեցույցի հետ միասին, օրինակ՝ որպես դրա հավելված:

Համացանցի բնույթն այնպիսին է, որ այն գործում է տեղեկատվության հայցեր ուղարկելու և ստանալու միջոցով՝ չճանաչելով սահմաններ և, հետևաբար, անկախ սահմաններից: Սա նշանակում է, որ Մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները համացանցում կարող են միջամտության ենթարկվել պետական և ոչ պետական գործող անձանց կողմից Եվրոպայի խորհրդի սահմաններից անդին, օրինակ՝ միջամտություն արտահայտվելու ազատությանը և տեղեկատվության մատչելիությունը, ինչպես նաև անձնական կյանքի նկատմամբ հարգանքին անհատական բնույթի տվյալների առնչությամբ: Հետևաբար, **Գործողություն 4-ով** առաջարկվում է համակարգում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների, Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող պետությունների և ոչ պետական դերակատարների միջև:

**Գործողություն 5-ով** անդամ պետություններին առաջարկվում է խրախուսել իրական երկխոսություն մասնավոր հատվածի, համապատասխան պետական մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության միջև նրանց սոցիալական պատասխանատվության ոլորտում: [Բիզնեսի և մարդու իրավունքների ոլորտի ուղենիշային սկզբունքների](#) հիմնարար սկզբունքներից մեկն այն է, որ բիզնես ձեռնարկությունները պետք է հարգեն մարդու իրավունքները և խուսափեն այլոց

իրավունքները խախտելուց, ինչպես նաև վերացնեն մարդու իրավունքների խախտումների այն բացասական հետևանքները, որոնք իրենց մեղքով են առաջացել: Մասնավոր հատվածի դերակատարների թափանցիկության և հաշվետվողականության անհրաժեշտությունը կդրսևորվի նաև, եթե նրանք ակտիվորեն խթանեն և տարածեն Ուղեցույցը: Օրինակ՝ Համացանցի ծառայություններ տրամադրողները և բովանդակության մատչելիության տրամադրողները կարող են հղումներ կատարել Ուղեցույցին իրենց ծառայությունների պայմաններում և նորմերում:

**Գործողություն 6-ով** ճանաչում է այն առաջադիմ մասնակցությունը, որ քաղաքացիական հասարակությունը կարող է ունենալ Ուղեցույցի խթանման և դրա պահանջների ապահովման գործում: Հետևաբար, առաջարկվում է, որ անդամ պետությունները խրախուսեն քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և ակտիվիստներին օգնել իրենց Ուղեցույցի տարածման և կիրառության հարցում և օգտվեն դրանից, երբ կքարոզեն մարդու իրավունքների չափորոշիչները և դրանց պահպանումը:

Տես [Բացատրական հուշագրի](#) ամբողջական տեքստն այստեղ:

[www.coe.int](http://www.coe.int)

Եվրոպայի խորհուրդը մարդու իրավունքների զօժով առաջատար կազմակերպությունն է նայրցամաքում: Այն ունի 47 անդամ պետություններ, որոնցից 28-ը Եվրոպական միության անդամ երկրներ են: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանության պայմանագիր է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է կոնվենցիայի կատարումը իր անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE